



ԸՆԾԱԳԻՐ
ԿՐԾՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ
ԲՈՆԵԱԽՐԱԿԱՆ



ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՐԱՍ. ԵՐԿՐԱՆՆԵՐԻ ԸՆԾԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ
ԵՐԶԱՆ

1955

ԽՁ. 1
ՏԱՐԻ

«Տիւոն» ամիսական արմենի շիւրիք. ճշմարտութիւն, գրականութիւն, լեզուաբանութիւն

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology
Printed in JERUSALEM

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

	<i>երես</i>
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	
— Ս. Յարութեան Տանարի նորագույնի հարցը (Բ)	65
ԿՐՕՆԱԿԱՆ	
— Մեծ պահք	ԶԱԻԷՆ ՎԱՐԲԱՊԵՏ Զ. 69
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ	
— Ինքնեզուրիւն (Բ, Գ եւ Դ)	Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ 72
— Գեղիւն, դեղիւն ծաղիկներ	ՎԱՀՐԱՄ ՄԱՎԵԱՆ 73
— * * *	ԳԱԶԻԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ 73
— Զանգակներ	ԶԱԻԷՆ Վ. Զ. 74
ԳՐԱԿԱՆ	
— Յակոբ Պարոնեան (1)	Յ. ՅՇԱԿԱՆ 75
ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
— Պապ Աբգակունցի (7)	ՀՐԱՆԴ Բ. ԱՐՄԷՆ 79
ԸՆԿԵՐԱՅԻՆ	
— Առաջնորդելու արուեստը (2)	Ա. Մ. 84
ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ	
— (Խել) Յովնաննէս Թլուրանցի (4)	Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ 87
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ	
— Սան Ֆրանսիսկոյէն դեպի Սիսնի (2)	ԱՍՈՂԻԿ Ծ. ՎՐԻ. ՂԱԶԱՐԵԱՆ 91
Յ. Օսական եւ Համապատկեր Արեւմտ. Գրականութեան	ԶԱԻԷՆ ՎՐԻ. 94
Ս. ՅԱԿՈՐԻ ՆԵՐՍԷՆ	
— Հեռագիրներ	95
— Եկեղեցականք - Բեմականք	95
— Պատեմականք	96

ՍԻՈՆ-ի Տարեկան բաժնեգիրն է՝
բոլոր երկիրներու համար՝ Անգլ. Նիլին 20

*Redaction of the Armenian Monthly SION
Armenian Patriarchate,
P. O. B. 4001
Old City - Jerusalem
Via Amman (Jordan)*

—≡ Ս Ի Ո Ն ≡—

ԻԹ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1955

≡ Մ Ա Ր Տ ≡

ԹԻԻ 3

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Բ.

Ս. Յարութեան Տաճարի նորոգութեան առիթով, առանց նպատակ ունենալու Սիւնի այս էջերուն մէջ քրիստոնէական այս մեծ Սրբավայրին պատմականը ընելու, անհրաժեշտ կը նկատենք ընդհանուր զիծերով ուրուագրել քանի մը մեծ իրողութիւններ՝ որոնք Սրբավայրին ծագման, շինութեան և դարաւոր կեանքին զլիսաւոր փուլերը կը կազմեն:

Քրիստոսի Յարութենէն և քրիստոնեայ համայնքի կազմութենէն և դարգացումէն մինչև Մեծն Կոստանդիանոս, որու կայսրութեան շրջանին կը զուգադիպի Ս. Յարութեան Տաճարի հիմնարկութիւնը, Երուսաղէմը մագնիսական Սրբավայրն էր բոլոր քրիստոնեաներու համար: Ըստ Յերոնիմոսի, «մեր Տիրոջ Համբարձումէն մինչև այսօր երկար պիտի ըլլար թուել անունները այն եպիսկոպոսներուն, մարտիրոսներուն, Եկեղեցւոյ վարդապետներուն, որոնք եկան Երուսաղէմ՝ կարծելով թէ թերի պիտի ըլլար իրենց հաւատքն ու զիտութիւնը և անկատար՝ իրենց առաքինութիւնը, եթէ երկրպագած չըլլային Քրիստոսի այն վայրերուն մէջ՝ ուր Աւետարանի լոյսը սկսաւ տարածուիլ Խաչին վրայէն...»: Եւսերիոս, Յերոնիմոսէն շուրջ դար մը առաջ, իր Յոյցք Աւետարանական գիրքին մէջ կը յայտնէ թէ բոլոր եպիսկոպոսները աշխարհի ամէն կողմերէն կ'երթային Պաղեստին՝ մեծաբելու համար Տիրոջ Համբարձումը Չիթենեաց լեռան վրայ: Ուխտաւորական այս ողին մէկ կողմէն, մեր Տիրոջ Տնօրինական վայրերու աւանդութեան անխափան շարունակութիւնը միւս կողմէն, Երուսաղէմը պիտի վերածէին Սրբազան Մայրաքաղաքի մը, քրիստոնեայ բոլոր սերունդներուն համար, մեր Տիրոջ Յարութենէն սկսեալ:


Միլանի հրովարտակով (313) ազատութիւն տրուեցաւ Եկեղեցիին և իրեն վերադարձուեցան իր բոլոր ինչքերը: 324ին Կոստանդիանոս կայսրը կը

գրէր Եւսեբիոս Կեսարացիին՝ որ պաշտամունքի հին վայրերը նորոգելու և նորերը շինելու մասին հրահանգներ տայ կղերական դասուն: Յաջորդ տարին, Երուսաղէմի Ս. Մակար Եպիսկոպոսը նիկիոյ ժողովին մէջ կը հանդիպէր Մեծն Կոստանդիանոսի և արտօնութիւն կը ստանար անկէ՝ Ազրիանոսի օրով ծածկուած հոգերէն մաքրել Գողգոթան և Ս. Գերեզմանը: Այնպէս որ երբ տարի մը վերջ՝ Կոստանդիանոսի մայրը՝ Հեղինէն Պաղեստին եկաւ, սկսած էին արդէն պելուսները, եւ յաջորդաբար կարճ ժամանակուան ընթացքին, երևան պիտի հանուէին Ս. Գերեզմանը, Գողգոթայի ժայռը և Յիսուսի ճշմարիտ Խաչափայտը:

Անմիջապէս որ Յիսուսի Գերեզմանը երևան եկաւ, Կայսրը զրեց Մակար Հայրապետին և շնորհաւորեց զինքը այս բարեբաստիկ զիւտին համար, հաղորդելով նոյն ատեն թէ ինքը հրահանգած էր արդէն իր փոխ-ատենակալին և Պաղեստինի կառավարիչին, յիշեալ Սրբավայրին վրայ շինուելիք յիշատակարանի մասին: Քիչ յետոյ Կայսեր կողմէն Երուսաղէմ կը հասնէին Ձենորիոս ու Եւստաքէոս ճարտարապետները ու կը ձեռնարկէին շինել Ս. Գերեզմանը ծածկող գմբէթայարկ շէնքը: Կոստանդիանոսի նախաձեռնութեան շնորհիւ և ձեռամբ իր մօր՝ Հեղինէի կառուցուեցան նոյնպէս ուրիշ երկու կաթողիկէներ, մէկը Բեթղեհէմի Ծննդեան Այրին վրայ և միւսը Չիթենեաց լեռը՝ Ելէոնայի Այրին վրայ: Այդ շինութիւնները զրեթէ աւարտած էին երբ 333ին անանուն ուխտաւոր մը Պորտոյէն Երուսաղէմ այցելեց:

Ժամանակի ընթացքին ուրիշ կայսրուհիներ, իշխաններ և իշխանուհիներ շարունակեցին այցելութեան գալ Երուսաղէմ և եկեղեցիներով, վանքերով, հիւանդանոցներով ու հիւրանոցներով դարդարել Ս. Քաղաքը: Մատապա զիւրին մէջ 1897ին զանուած է եկեղեցիի մը յատակը կազմող խճանկար քարաէս մը, Չ. դարէն, որ կը ներկայացնէ Պաղեստինի աշխարհացոյցը: Սոյն քարաէսին վրայ կ'երևին քաղաքին զլխաւոր մուտքերը, բոլոր Սրբավայրերը, մասնաւորաբար Ս. Յարութեան Տաճարը, իր գաւիթներով, երեք դուռներով և գմբէթով, որ կը հովանաւորէր շիրիմը: Երուսաղէմը Գ. Ե. և Չ. դարերուն վերածուած էր մասնատուփի մը, ոչ միայն շնորհիւ իր եկեղեցիներուն, վանքերուն, հիւրանոցներուն և հիւանդանոցներուն, ինչպէս նաև իր նկատմամբ զգացուած բարեպաշտութեան, որ Ս. Քաղաք կ'առաջնորդէր ամէն տարի ուխտաւորներու կարաւաններ, այլ մանաւանդ քաղաքը մեծ ժամադրավայրն էր արևելքի վաճառականութեան: Ս. Յարութեան նաւակատեաց ատնի հանդէսներուն առթիւ կարաւաններ հոն կը հասնէին, Փոքր Ասիայէն, Պարսկաստանէն, Հայաստանէն, Արաբիայէն, Ափրիկէէն: Հոն կը վաճառուէին Տիւրքոսի ասուին, Եթովպիոյ փղոսկրը՝ ոսկին, գմբուխան ու խունկերը Հնդկաստանի, Չինաստանի մետաքսը: Արևելքի վաճառականներու կողքին կ'երևէին Ֆրանկ վաճառորդներ, Մարսէլէն, Աուրնէն, Նարպոնէն, որոնք կուզային վաճառել «Բրովանսի ձէթը՝ որ աւելի ազնիւ կը նկատուէր քան արևելքինը, և զինին ու երկաթը»:

614ին, Պարսից Խոսրով Բ.ի առաջնորդութեամբ պարսիկներ զրաւելէն վերջ Սիւրիան, Կապադովկիան և Դամասկոսը, մտան Պաղեստին, պաշարեցին



Երուսաղէմը և զրաւելէն վերջ, քանդեցին եկեղեցիները, կոտորեցին բնակչու-
թիւնը և կողոպտեցին քաղաքը: Խոսորով վերապրողներու մէջէն բազմաթիւ
արհեստաւորներ զերի առաւ, ինչպէս նաև Զաքարիա Պատրիարքը և Քրիստոսի
ճշմարիտ Խաչափայտը:

Հերակլէս Կայսրը 630ին Պարսիկներէն ետ ստացաւ Խաչափայտը իբրև
նուէր և անձամբ բերաւ Երուսաղէմ ու յանձնեց զայն Զաքարիայի յաջորդ
Մոգեստոս Պատրիարքին, որ լծուած էր Ս. Տեղերը նորոգելու գործին: Մո-
գեստոս վերստին նորոգեց Ս. Յարութեան Տաճարը: Անոր շինարարական աշ-
խատանքները շարունակուեցան իր յաջորդին՝ Սոփրոնիոս Պատրիարքին կողմէ:

637ին Երուսաղէմ մտան Արաբները, Ամրու զօրավարին առաջնորդու-
թեամբ: Սոփրոնիոս Պատրիարք նախ դիմադրեց, բայց երբ համոզուեցաւ թէ
կարելի չէ որևէ օգնութիւն ակնկալել Բիւզանդիոնէն, քաղաքին տիրանալու
հրաւիրեց Օմար Խալիֆան, որուն մեղմ բնաւորութեան ծանօթ էր ինքը ար-
դէն: Օմար 638ին Երուսաղէմ եկաւ և բանակեցաւ Չիթենեաց լեռան վրայ,
ու հոն դաշինք կնքեց Սոփրոնիոս Պատրիարքին հետ: Այդ դաշինքին համաձայն
ազանովութիւն կը տրուէր բնակիչներու կեանքին, ինչքին ու եկեղեցիներուն:
Իսկ զինուորներն ու պաշտօնեանները ազատ պիտի ըլլային անցնելու սահմանէն
անդին՝ դէպի Բիւզանդական երկիրները: Օմար Սոփրոնիոսի ընկերացած՝ աղօ-
թեց Ս. Յարութեան Մատուռին աստիճաններուն վրայ, ապա զնաց աչքէ ան-
ցընելու Տաճարի սարահարթը ու այնտեղ, կ'ըսեն, խորհրդաւոր շարժումով մը
քիչ մը հող լեցուց իր կրկնոցին մէջ ու անձամբ տարաւ ու թափեց ըլուրի
զառիթափէն վար: Այսպէս Իսլամը տիրեց Երուսաղէմի 638ին, իսկ Սոփրոնիոս
Պատրիարքը յաջորդ տարին վախճանեցաւ սրտի ցաւէն:

Բաւական ժամանակ, հակառակ Մահմետականներու զօրացման Ս. Երկրի
մէջ, խաղաղութիւնը շարունակուեցաւ: Ֆրանկ կայսրերու և Պաղտատի խալի-
ֆաներու բարեկամական յարաբերութիւններն այ իրենց բարերար դերը ունե-
ցան անշուշտ: Սակայն 1009ին, Երուսաղէմի մէջ մահմետականներն ու քրիս-
տոնեանները նոր ընդհարումներ ունեցան, վասնզի մահմետականները չէին կըր-
նար հանդուրժել որ քրիստոնեանները գերակշիռ ազդեցութիւն մը ունենային
Ս. Երկրին մէջ: Այդ գերակշռութեան վերջ տրուեցաւ Հաբիմ Խալիֆային օրով,
թաղակիր յիմար մը որ, 1010ին, կործանեց Ս. Յարութեան Տաճարը և քանդեց
ու մզկիթի վերածեց ուրիշ շատ մը եկեղեցիներ:

Համեմատաբար խաղաղ շրջան մը յաջորդեց այս փոթորիկին, և Բիւ-
զանդիոնի կայսրերը, Բասիլ Բ., Կոստանդին Ը., Միքայէլ Գ., Կոստանդին Թ.,
Կոստանդին Ժ., Պաղեստինի վրայ ունեցան տեսակ մը պաշտպանութիւն՝ յար
և նման Կարօլոսի պաշտպանութեան: Այս շրջանին (1027-1048) այսինքն Կոս-
տանդին Թ.ի և Մանուաիոս մականունեալ Կոստանդին Ժ.ի օրով վերաշին-
ուեցաւ Ս. Յարութեան Տաճարը՝ բացի մատուռէն: Արևմտեան իշխաններու
շարունակուող նուիրատուութիւններու շնորհիւ Լատինական հաստատութիւն-

ներով կը ճոխանար Ս. Քաղաքը: Յոյները, միւս կողմէն, որոնց թիւն ու անտեսական ոյժը 1054էն սկսած էր նուազիլ, զրդեցին Բիւզանդիոնի կայսրերը՝ որ դժուարութիւններ յարուցանեն արևմուտքի ուխտաւորներուն դէմ: Հակառակ սակայն Բիւզանդիոնի կողմէն 1054էն աաղին յարուցուած դժուարութեանց արևմուտքի ուխտաւորութիւնը նոր ոգևորութիւն և թափ կը ստանար, երբեմն մինչև 12.000ի հասնող ստուար խումբերով: Արևմտեան ազգերը այսպէս պիտի ընտելանային Պաղեստինի ճամբաներուն, մինչ միւս կողմէ ուխտաւորներու շնորհիւ ստեղծուած այս մշտապէս յարաբերութիւնը պիտի աւելցնէր արևմտեան քրիստոնէութեան մէջ Ս. Գերեզմանի նկատմամբ սարուէ տարի աւելի մեծցող խանդավառութիւն մը: Այս կերպով արդէն կը պատրաստուէր Խաչակիրներու շարժումը, վերջ տալու համար իսլամական տիրապետութեան, որուն դէմ անգոր եղած էր Բիւզանդիոնը:

Երբ Խաչակիրները 1099ին զրաւեցին Երուսաղէմը, Ս. Գերեզմանի Եկեղեցիին շուրջ եղած բոլոր գատ Սրբավայրերը, մէջն ըլլալով Գողգոթայի Եկեղեցին, միացուցին իրարու մէկ տանիքի ներքև անոր տալով մօտաւորապէս իր այժմու կառոյցը և 1149ին կատարուեցաւ իր օժման նաւակատիքը:

1244ին Թաթարական արշաւանք մը անգամ մը ևս կործանեց իր հրապոյրներէն և բնակիչներէն մեծապէս տուժած Երուսաղէմը: Քիչ յետոյ Սուրբ Քաղաք կը հասնէր նաև իրենց մէկ զաշնակիցը, հայոց Հեթում թագաւորը, որ զրաւեց քրիստոնեաներու վստահութիւնը ու ամբողջ 15 օրեր մեծահանգէս պաշտամունքներ կատարել տուաւ Ս. Յարութեան Տաճարին մէջ: Մոնղոլներու խանը՝ նոյնիսկ Հեթումին նուիրեց Երուսաղէմը իր շրջականներով: Ափսոս սակայն, որ շատ կարճատև պիտի ըլլար այս զրաւումը:

1545ին, Ս. Յարութեան զանգակատան աշտարակը վնասուեցաւ երկրաշարժէն, և զմբէթը ինկաւ ու քանդեց մէկ մասը Եկեղեցիին: 1779ին նորոգուեցան թէ Ս. Յարութեան և թէ Գերեզմանի զմբէթները: 1808 Հոկտ. 12ի զիշերը այրեցաւ Ս. Գերեզմանի զմբէթը և վնասուեցան Գերեզմանի Մատրան մարմարեայ յատակն ու պատերը: Յոյները արտօնութիւն ստացան Սուլթան Մանուու Բէն և նորոգեցին Եկեղեցին: Յոյները այս գործը վստահեցան միջակ ճարտարապետի մը, աւելի ճիշդ որմնադրի մը՝ որ անգիտակցօրէն կամ զիտակցաբար սրբեց ինչ որ կը մնար Խաչակիրներէն, մէջն ըլլալով Լատին թագաւորներու զերեզմանները և Ս. Գերեզմանին վրայ շինեց այժմու անճաշակ և անոճ զմբէթը: Երկնեց նոյնպէս Տաճարին զմբէթը որ յիսուն տարիներէ ի վեր փլշելու վտանգի ներքև է: 1863ին ամբացուեցան եղան յիշեալ զմբէթին վրայ, մասնակցութեամբ Ֆրանսայի, Ռուսիոյ և Թուրքիոյ:

1927ի երկրաշարժը ծանրօրէն վնասեց Եկեղեցւոյ կառոյցին: Առաջըր առնելու համար հաւանական վիուղումի մը երկաթեայ մոյթեր գետեղուեցան բոլոր վնասուած կէտերուն շուրջ, իսկ 1930ին նորոգուեցաւ Քաթուլիքոնի զմբէթը որ ծանր շինուած ըլլալուն համար կը ճնշէ ամբողջ կառոյցին վրայ:

ԿՐՕՆԵԿԱՆ

Մ Ե Մ Պ Ա Հ Ք

«Մի հոգայք վասն եզրագ ձերոց՝ զինչ ուսիցեք կամ զինչ ըմպիցեք, եւ մի՛ վասն եզրագ ձերոց՝ յէ զինչ ազանիցեք. ա՛յ ապաքէն թզի առաւել է քան զինքանկուր, եւ մարմին՝ քան զմտնդեք»։ (ՄԱՍԹ. Զ. 25)։

Առաջին ակնարկով՝ մեր Տիրոջ այս խօսքերը ճշմարտագանցական ըլլալ կը թուին. վասնզի ըլլալով մարդկային էակներ՝ բոլորս ալ ունինք համապատասխան բնական պահանջքներ որոնք պարտինք լիացնել։ Որքան ալ մարդը յընդհանուրն բարձրանայ իր զարգացումի ճամբուն վրայ և նուաճէ նորանոր բարձունքներ, տակաւին հակամէտ է մտիկ ընելու իր կարգ մը բնազդներուն, որոնք գոյութիւն ունին իր էութեան ամենէն խորունկ ընդերքներուն մէջ. այսպէս է ինքնապահպանման բնազդը, սիրոյ բնազդը, անօթութեան բնազդը և ուրիշ բազմաթիւ բնազդներ. և սակայն եթէ մարդը ունի իր անտեղիտալի պահանջքները որոնք կը յառաջագային բնազդներու մեր մէջ ձայն բարձրացնելէն, ունի նաև իր անմխտելի բանականութիւնը որ կը վարէ զինք իբր բանաւոր էակ և հանապազ կը զգացնէ աստուածային շունչին ներկայութիւնը իրմէ ներս և Անոր պատկերին զրօշմը հոգիներուն վրայ։

«Մի հոգայք վասն ուրաց ձերոց՝ թէ զինչ ուտիցեք»։ Քրիստոսի այս խօսքերուն առաջին ակնարկով մը ճշմարտագանցական ըլլալը յառաջ կուգայ այն երևոյթէն մահաւանդ որ կ'ապրինք ժամանակաշրջանի մը մէջ ուր մտածումներու և գաղափարներու մեծ յեղաշրջում կ'արձանագրեն մարդիկ ամէն օր։ Հետամուտ են նորութիւններու, միշտ յառաջդիմութեան պիտակին ներքեւ։ Ինչ որ կ'ընեն և կ'իրագործեն որևէ մարդի վրայ, ընկերային, բարոյական, գիտական կամ իմացական, կ'ընեն ի փառս յառաջդիմութեան։ Քրիստոսի ուսուցումը սակայն յակտեանական ճշմարտութիւնը բերաւ մեզի՝ «Յառաջդիմութիւնը» պատրանք մըն է բաւին լայնագոյն առումով, pathos մը զոր

ստեղծած է մարդկութիւնը, անոր յանդիմ աչքերը և անտեսելով ուրիշ ամէն բան, աւանդութիւն, բարոյական, և մինչև իսկ կրօն։

Պատրանք մը՝ նախ անոր համար որ այսօրուան քաղաքակիրթ ժողովուրդներ և լուսաւորութեան ռահվիրաներ գատորշում մը չեն ըներ մշակոյթին և քաղաքակրթութեան միջև որոնք ըստ երևոյթի շատ մօտ են իրարու, շփոթուելու աստիճան, բայց ըստ էութեան ներհակ իրարու և հակասական։

Մշակոյթը ողեկան իրողութիւն մըն է զոր մարդիկ կ'իրագործեն մշտ կրօնական մթնոլորտի մը և կրօնական հայեցողութիւններու մէջ։ Անկախ ծնունդն է կրօնական սրբազան խորհրդաւորութեան, mysticismeի։ Այսպէս էր պարագան նախաքրիստոնէական յոյն մշակոյթին զոր հոսովէական կայսերապաշտութիւնը իր աշխարհայնութեամբ և փառքի մտասեկոտումով քանդեց տեղի տալով մեծածաւալ պատերազմներու, հաւաքական նախնիներու և արիւնայի տառապանքի։ Այսպէս էր պարագան Իտալական Վերածնունդին, այսպէս էր պարագան Եւրոպայի մէջ հանձարային ծընունդներուն, — Պէթհօվէնի, Վակնէրի, Բանդի, Հէկէլի և այլոց որոնց ձայնը և գործը խեղդուեցաւ, տակաւ երևան եկող գերման կայսերապաշտական ձգտումներէն։

Մշակոյթը որ կը յայտնէ ինքզինքը Գեղեցիկ Զեյ մէջ, սերտորէն առնչութիւն ունի կրօնքին և պաշտամունքին հետ։ Նախապատմական շրջաններէն ի վեր մարդիկ կը յայտնեն իրենց կրօնական զգացումները զանոնք արձանացնելով և սեւեռելով նիւթին վրայ։ Ի՞նչն ու արարողութիւնը անհրաժեշտ ազգակներ են, վասնզի եկեղեցական խորհուրդներն ալ արտաքին իրենց ձևականութեամբ կ'անդրադառնան հոգիին վրայ, հոն հոսեցնելով աստուածային շնորհը։

Քաղաքակրթութիւնը կը ձգտի բարօր կեանք մը ապահովել մարդոց՝ ա՛յս աշխարհի վրայ և իրեն զլիսաւոր միջոց ունի ճարտարարուեստը զոր մեծ թափով յառաջ կը տարուի 19րդ դարու սկիզբէն ի վեր։ Քաղաքակրթութիւնը սակայն հակառակ է կրօնական խորունկ ապրումին, հայեցումին, այն զլիսաւոր պատճառով որ նախ՝ կը հաւատայ «մեծագոր և ամենագոր» նիւթին,

որ ժամանակաւոր է այս աշխարհի մէջ, և հակամէտ փճանալու և կորսուելու: Մարդը արդի աշխարհի մէջ կը ձգտի գոցէ նիւթին միջոցաւ հասնիլ գերմարդուն . . . : Հաղաբաւոր տարիներ առաջ Բարեկոնի մէջ, Շինարի զաշարն վրայ աշտարակ մը կը բարձրացնէին . . . : Մինչև հիմա երազ մըն է ատիկա, առանց հաշուելու թէ արարած մը միշտ փոքր է Արարիչէն, ինչպէս պարունակեալ մը պարունակողէն և երբեք չի կրնար անդրանցնիլ զայն:

Ճարտարարուեստի դարուն սկիզբը երբ մարդիկ հնարեցին շոգեկառքը, գոհ էին և ուրախ. ատեն մը ետք չի գոհացան և չի բաւականացան, հնարուեցաւ ինքնաշարժը, որ՝ թէև աւելի արագ, բայց զետնաքարչ էր տակաւին. կ'ուզէին թռչիլ, սլանալ, պատուելով անսահման կապոյտին ծոցը. կը թռին հիմա և կը շինեն շէնքեր որոնք աւելի բարձր ըլլան հարիւրաւոր յարկերով Բարեկոնի Աշտարակէն, իրենց զագաթները մխրճելու համար ամպածրար անհունին մէջ: Տակաւին, երկիր մոլորակը նեղ կու գայ, կ'ուզեն գտնել նոր մոլորակներ . . . : Քաղաքակրթութեան մէջ, նիւթն է, երկաթն է, մեքենան է որ կը պաշտօնի և ոչ թէ Աստուած: Մեքենան արդի աշխարհին մէջ ամէն բան է և գերազոյն արժէք. այն որ հնարուած և շինուած էր մարդոց բարիքին համար, հիմա գործազուրկներու բանակ մը կը ձգէ փողոցը, անխնամ և կարօտ:

Մարդը կ'ամբարէ, առանց անդրադառնալու Յիսուսի գեղեցիկ խօսքին. — «Մի՛ հոգայք ընդ ոգւոյ թէ զինչ ուտիցէք և մի՛ ընդ մարմնոյ թէ զինչ զգենուցուք. զի ոգի առաւել է քան զկերակուր, և մարմին՝ քան զհանդերձ»: Արդարև ոգին առաւել է քան մարմինը:

Աւետարանին մեծատուներ կ'ամբարէր և իր շտեմարանները կ'ընդլայնէր առանց երբեք մտածելու իր հոգիին և մեղքերուն մասին, ու նոյն գիշերն իսկ Աստուած ըսաւ անոր. — «Անմիտ, յայսմ գիշերի զօրիդ ի քէն ի բաց պահանջիցեն, իսկ զոր պատրաստեցերն՝ ո՛ւմ լինիցի, որ գանձէ անձին, և ոչ յԱստուած մեծանայցէ» (Ղուկ. ԺԲ. 20-21):

Տեսանողներ, մարգարէներ, կրօնական առաջնորդներ, ոգիով լեցուն մարդիկ էին որոնք կ'արհամարհէին մարմինն ու անոր

պէս պէս կարիքները, ցանկութիւնները: Մովսէս (Ելից ԼԳ. 28), Դաւիթ (Բ. Թագ. Ա. 12), Եղիա (Գ. Թագ. ԺԹ. 8), Եսայի, Յովհ. Մկրտիչ, նոյնիսկ Յիսուս (Մատթ. Գ. 2), պահեցին կամ ծով բռնեցին, այդ ձևով լեցուելու համար կրօնական ներշնչումով, ոգեպէս յաղթելու համար մարմնին և անոր ցանկութիւններուն:

Մեծ մտածողներ կ'ըսեն թէ մշակոյթը յաւիտենական է սրովհետև ոգի մը ծնունդն է, կրօնական ապրումին ներքև կը ծաղկի: Ազգերը կ'իրականացնեն մշակոյթ մը վրան զի կուտան ինչ որ ունին լուսազոյն իրրև ոգի և կրօնական ներգոր ապրում ու ձրգտում: Փիտիաս և Փրաքսիթէլ, Հոմերոս և Վիրգիլիոս, Տանթէ և Միքէլ Անժ, Շէյքսպիր և Միլտոն, Հիւկո և Լամաոթին անմահ են և յաւիտենական. մինչ՝ Աղէքսանդր, Կեսարներ, Նափօլէօն, Հիթլեր կը մնան պատմութեան էջերուն մէջ իրրև երբեմն զազան և երբեմն մեծ սճրագործներ . . . :

Ամէն ոք քաղաքական նոր և տաղնապալի իրադարձութիւններէ, զալիք հաւանական նոր աղէտէն կը տուայտին. գիտութիւնը նոր գէնքեր կը շինէ, որոնք մարդկային պատմութեան մէջ աննախընթաց աւերներ կրնան գործել: Պետութիւնները կ'ամբարեն: Մարդկային հոգին իսպառ իսազաղութիւնը կորսնցուցած կը թուի ըլլալ: Բայց ազնիւ և բարի, ստաքիներ և գեղեցիկ գործերը իսազաղութեան մէջ միայն կրնան տեղի ունենալ և սուր Հոգի Տեսնան, անդ և իսազաղութիւն» (Բ. Կորնթ. Գ. 17): Այնքան ատեն որ մարդիկ հեռու կենան Աստուծմէ, չանդրադառնան իրենց մեղքերուն, աւելի և աւելի պիտի տառապին և գիտութիւնն ու քաղաքակրթութիւնը կործանարար ուժեր պիտի ըլլան դարերու ստեղծած մշակոյթը քանդելու համար:

Կ'ըսեն թէ քաղաքակրթութիւնը ապագայապաշտ է, մինչ մշակոյթը յաւիտենական: Բոլոր քաղաքակրթութիւնները պատմութեան ընթացքին հասած են որոշ բարձրութեան մը և յետոյ սկսած անկման և այսօր լոկ կը յիշուին: Մենք իրաւամբ Սուրբ կը կոչենք Ս. Մեսրոպը որ հիմը դրաւ մեր մշակոյթին: Քրիստոսով սկզբնաւորուած, առաքեալներէն քարոզուած, Ս. Գրիգոր Լուսաւորիչով լուսաւորուած մեր Եկեղեցին էր որ զմեզ մղեց ստեղծելու մեր մշակոյթը:

ինչ որ ունէինք թանկագին իրրև մեր մըա-
 քին և հողին ծնունդը հաւատարապէս,
 ընծայարերեցինք դայն Հայաստանեայց Ս.
 Եկեղեցիին: Մագաղաթեայ դէմքերով հայ-
 րապետներ և վարդապետներ, մագաղաթի
 վրայ ամենէն նուրբ արուեստը իրագործե-
 ցին իրենց գեղեցիկ նուաճումները նուիրե-
 լով Գերագոյն Գեղեցիկին, որմէ փոքրիկ
 լով ունէ մը ունէին իրենք միայն: Մեր ճար-
 տարապետները ամենէն առաջ շինեցին մեր
 եկեղեցիները, անոնց կաթողիկէներուն մէջ
 սլացնելով հայ հողին պաշտամունքին խո-
 յանքը, ամենէն դժուար ժամանակներուն
 մէջ իսկ: Մեր մայրերն ու քոյրերը բերին
 իրենց ասեղնագործութիւններն ու վարա-
 գոյրները ծածկելու համար և զարդարելու
 Աստուծոյ Տան խորանները: Նկարիչները
 իրենց հանճարները ի սպաս զրին զարդա-
 րելու որմերը մեր Տաճարներուն: Այսպէ՛ս
 հետագայ քաղաքականապէս զժբախտ և
 ցաւոտ դարերուն վրայ Լայսը միշտ փառա-
 բանելու համար աղօթեց Ս. Գր. Նարեկա-
 ցին: Ս. Ներսէս Ենորհայլին իր բանին ոյժով
 տարփողեց Բանը որ եր ի սկզբանէ: Ուր որ
 գացինք խմբովին, հայրենիքէն ներս թէ
 դուրս, մեր առաջին գործը եղաւ շինել մեր
 եկեղեցին և մեր դպրոցը՝ յառաջացնելու
 մեր մշակոյթը որ ծառայել է մեր Աստու-
 ծոյն . . . : Բան մը կայ սակայն հիմա փոխ-
 ուող, արդէն իսկ փոխուած: Անդրադարձ
 մը մեր հողիններուն՝ վերահասու պիտի ընէ
 մեզ հոն երևան եկող անստուգութեան և
 տագնապին որ չարիքն է, ներմուծումն է
 արդի բարքերու և սովորութիւններու,
 իմա՛ արդի քաղաքակրթութեան, որուն
 շողշողուն տեսքէն խաբուած, ափերով կը
 հաւաքենք անկէ: Փրփո՛ւր կը հաւաքենք. . . :
 Չենք թափանցեր խորքին առնելու համար
 անհրաժեշտն ու էականը: Արտաքին երե-
 ւոյթ, երբեմն պատկեր, և երբեմն ձև է
 միայն ատրկա: Անհրաժեշտ է որ պայծա-
 րանայ մեր հողին, կարենալ տեսնելու հա-
 մար հոն գոյացող նորորինակ խաւերը մեզ-

քերուն և ոչ-հայեցի, ոչ-ողեկան, ոչ-կրօ-
 նական իրողութիւնները. և այս՝ թօթափե-
 լով աշխարհայնութիւնը, հրաժարելով պահ
 մը մարմնական պիտոյքներէն որոնք կրնան
 գիտակցելու մղել զմեզ, վասնզի ողի ա-
 ռաւել է քան զկերակուր եւ զնաւընթա . . . :
 Հայց. մեր Ս. Եկեղեցին է որ Սրբազան
 Հայրապետներու տնօրինմամբ կը հրահանգէ
 պահել 40 օրեր շարունակ, պատրաստուե-
 լու համար քրիստոնէութեան և մեր հա-
 ւատքին ամենէն նշանակալից տօնը զիմա-
 ւօրելու, Քրիստոսի հրաշափառ Յարութեան՝
 որ զմեզ ազատագրեց մահկանացու ըլլալու
 գերութենէն:

Իրաւամբ կ'ըսուի յաճախ թէ երբ ազ-
 գովին մեզի հաց պակեցաւ, մենք չմե-
 աանք. երբ գանձազան պիտոյքներ պակսե-
 ցան, չմեաանք. երբ ամբողջ մեր երկիրը
 առին ատեն մը մենէ, մենք դարձեալ չմե-
 աանք. բայց երբ պակեցաւ և երբ պակսի
 մեզի կրօնական ապրումն ու ներշնչումը,
 մենք կը մեռնինք. որովհետեւ անիկա մեզի
 համար մթնոլորտ մըն է ուր աղատօրէն կը
 շնչենք և երբ չունենանք ազատ և անհրա-
 ժեշտ օդը . . . կը դատապարտուինք մահ-
 ուան:

Ս. Եկեղեցին կը հրաւիրէ մեզ անդրա-
 դառնալու այս իրողութեան, խորհրդածու-
 թեամբ և զգօնութեամբ սրբելու այն մեղ-
 քերը որոնք կամայ կամ ակամայ գործած
 ենք ժամանակին մէջ: Անդրադառնալով և
 ճշմարտապէս զզջալով կրնանք սրբուիլ
 մեր մեղքերէն ըլլալու համար ճշմարիտ
 որդիները մեր Երկնաւօր շօր, վասնզի կը
 պատգամէ Քրիստոս. — «եղբուք կատար-
 եալք որպէս երկնաւօր Հայրն ձեր կատար-
 եալ է»: Այսպէսով կրնանք իր ճշմարիտ
 դաւանները ըլլալ: Եւ եթէ դաւաններ ենք
 «ապա ուրեմն ժառանգք, ժառանգք Աս-
 տուծոյ և փառացն Քրիստոսի» (Հոովմ.
 Ը. 17):

ԶԱՒԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ Չ.

Ք Ն Զ Ն Ե Ր Գ Ո Ւ Թ Ր Ի Ն

•

Պուսային հետ, Լաօ-Յէին, չինասանցի Կոմկոկիտսին
Հետ օրէններ յօրինեցի, Բարոզեցիմ մենի միասին :

Սոկրատին հետ զրպարտեցայ, զրպարտեցի զայն անարբեր,
Թէ՛ մասուցի քէ՛ խըմեցի քոյնի բաժակը մահաբեր :

Նագովրեցի Յիսուսին հետ քափառեցայ, Բարոզեցի,
Անոր հետ քէ՛ խաչ բարձրացայ, քէ՛ զԱյն խաչին բեւեռեցի :

Արաբական անապատի մարգարէին հետ տեսալար,
Ես Ալլահին պատգամները տարածեցի բարձրաբարբառ :

•

Խարոյկներու վրայ ելեր եմ, ողջակիզուեր հազար անգամ,
Հազար անգամ զենուեր եմ ես, եղեր եմ ես արիւնաբամ :

Մոխիրներէն ծլեր նորէն, վերքնձիւղեր իբրեւ կընիւն,
Վերադարձեր կեանքին կըրկին, աւանդական որպէս քրոջուն :

Տառապանքի ծովէն անցեր ու վերջապէս հասեր եմ հոս,
Մերք ունեցեր Հաւասքը դեկ ու Տեսիլքը ինծի փարոս,

Մերք խաւարին մէջ անսահման ուզեր եմ ա՛լ վերջ տալ կեանքին,
Մերք աղերսեր եմ աստուծոյ յոյսի շող մը պաղատագին :

•

Դուրեանին հետ, բոց «Տրտուց»ով ես Աստուծոյ սիրտն եմ խոցեր,
Տէրեանին հետ, մեղմ եւ անուշ, հեկեկացեր ու հեծեծեր :

Եղիային հետ, խենք կարօտով, ես տենչացեր եմ Նիրվանան,
Եւ անոր հետ, պարանէ մը առկախեր եմ կեանքը ունայն :

Հիմա դարձեալ հոս եմ անա ու կը դիտեմ շուրջս նորէն,
Ու կը նայիմ անցած համբուս անծայրածիր, այս կասարէն :

Կը մըտածեմ՝ բիրտ ձեւերուս որոնք առի անցած համբուս
Ու վիճակիս՝ բոցերուն մէջ, ցուրտին՝ մութին՝ ուղեկորոյս :

Կը մըտածեմ ես ձեւերուն որ դեռ առնեմ պիտի անվերջ,
Մինչեւ հասնիմ օր մը Իրե՛ն բոլոր ձեւերս զրկեմ Ի՛ր մէջ :

(Պ. Երջ)

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՊԵՂՈՆՆ, ՊԵՂՈՆՆ ԾԱՂՆԿՆԵՐ

Նայումսքին մէջ մարդերուն՝ դեղին, դեղին ծաղիկներ
Բացին քերքերն իրենց լայն, անհրապոյր, բունածէս:
Նախանձն աւի՛ բարձրացաւ հոգիներէն անոնց մութ,
Եւ ապրեցուց, պահեց քամ մի՛ս ծաղիկներն այդ անբոյր:

Ջերմութեան մէջ ու լոյսին ներքն ուման՝ արեւին,
Ամօթահար կոյսերու պէս բօցնեցան գաղտնիքէն.
Եղան նաեւ ուրիշներ արմատախիլ՝ երբ քամին
Փչեց առողջ շունչն իր զով՝ բարձունքներու կասարէն:

Գեղին, դեղին ծաղիկներ, նետուած երբեմըն փունջ փունջ,
Յաղթանակին դէմ հպարտ՝ գեղեցկութեան արձանին,
Ու չորցած հոն՝ առաքուր, պատուանդանին անոր շուրջ:

Ու ծաղիկներ սակաւին համբաներուն վրայ փառքի,
Բաժակներով շրջուած, կեանքէն դատարկ ու սգեղ,
Պարսութեան վրէժ գերդ՝ ծլած ցաւի գիշեր մը այնտեղ:

Կակաչներու հով՝ անձայն մեռնող դեղին ծաղիկներ:

Վ.Ա.ՀՐԱՄ ՄԱՎԵԱՆ

* * *

Ժայռերի ծերպին լինէիր շուշան,
Ես էլ մի գետակ ձորերի միջին.
Արեւը այրէր քերքերդ շուշան,
Կարօս մնայիր ջրերիս կանչին:

Դու ժայռի ծերպին բօցնէիր լռիկ,
Դու սիրոյ ցօղի կարօս իմ շուշան.
Իսկ ես ձորերից հառաչէի մեղմիկ,
Ա՛խ, ի զուր, ի զուր ափիս չբուսար:

ԳԱԶԻԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Չ Ա Ն Գ Ա Կ Ն Ե Թ

Խաղաղութեան մէջ իրիկուան, զանգակներու ձայնն է միայն.
Ռոնն գլուարք զանգիւններով միջոցին մէջ կը քրքրուան.
Չանգակասան բարձունքին մէջ երգն ու աղօթքն արժարածայն
Ընդհան՝ ընդհան՝ սարածուելով, կը մեղմանան ու կ'անուշանան:

×

Չանգակներու բերանէն լայն, փրքող ամէն մէկ կանչ սակայն
Ալք մ'է խինգի, ու հոսանքին սակ կ'ողողուի, քրքիսոնեայ
Ամէն հոգի, սառած պատառ մը աղօթքի որ միջոցին
Մէջ կը յածի, կը քանձանայ ու վեհիմաստ կը քանանայ...:

×

Չանգակներու լայն բերանէն՝ պրկուած իրեւ աղեղ անզէն
Անձակուող այդ ձայներն անուշ ու արտաուշ բառեր են սուրբ,
Կ'երբան հըպիլ իրեւ քիրախ, մեղմուն իրենց սպառազէն
Հազարաւոր հոգիներու, հոն հոսելու պատգամն հասու:

×

Խաղաղութեան մէջ իրիկուան, զանգակներու ձայնն է միայն.
Կը զօղանչեն երկարօրէն, լուրբեան մէջ այս անսահման
Կ'առասանան համեղ մ'ինչպէս եւ մտերիմ յուրերու պէս
Կ'անցնին արեւ. զղա՛յ, հոգիդ հիւանդ է գուն գիտակ իսկ չես...:

×

Խաղաղութեան մէջ իրիկուան, զանգակներու ձայնն է միայն...

ՉԱԻԷՆ Վ. Զ.



ԿՐԱԿԱՆ

ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆ(*)

(1843 — 1891)



ՊէՊի ԻՐԱՊԱՇՏՆԵՐԸ խուճբը բարե-
 րարող ու արևմտահայ գրականու-
 թեան մէջ սեռի մը վրայ տիրական
 նուաճումներ իրագործող բացառիկ մարդ
 մըն էր էտիրնէցի այս պարզուկ սոմարա-
 կալը, որուն հողքը կէս դարով ծանրացած
 ըլլալուն հակառակ, ճշմարիտ մագնիս մըն
 է մեր արժէքներով մտահոգ ամէն աշխա-
 տաւորի։ Օրինակ մը մեծութեան։ Խորհրդ-
 դանշան մը աշխատանքի։ Արձան մը ան-
 սահման թշուառութեան։ Ու առակ մը ուր
 միտքին ու հոգիին կշիռը ըլլար ինքզինքը
 լարդարած։ Ոչ մուսաներ ունէր, ասոնց
 դարպասը օսկեզօծելու, ոչ ալ պատրանք-
 ներ, ասոնցմով ինքզինքը շուրջառելու։
 Իր հանդէսները — աշխատարանները — ի-
 րին պէս անկայուն, թշուառ։ Իր գիրքերը,
 իր լինները հարստացնելու սահմանուած,
 բայց իրեն արժող՝ տունին հացը ու զաւ-
 կըներուն անբաւարար սնունդ սրպէսզի ի-
 րենց ծիրուծմը երկարածգէ ազգային հի-
 ւանդանոցի պատասպարաններուն մէջ։ Հան-
 ձա՞ր։ Բացառիկ տաղա՞նդ։ Մեծ գրագէ՞տ։
 Գործածեցէք որը որ կ'ընտրէք սա պիտակ-
 ներէն իր անունին հետ։ Սխալ մը պիտի
 չընէիք։ Ու լայնցուցէք ձեր սիրտը, մա-
 նաւանդ միտքը, ինծի հետ խոստովանելու
 որ միայն Պարոնեան մը տուած ըլլալը բաւ
 է արևմտահայ գրականութիւնը ազատա-
 զրիւն, արձակելու իր մեղադրանքներուն
 մեծագոյն մթերքէն։ Դրէք Նոստրէրը (Ա-
 իլիան) տասներկուերորդ դարուն։ Ըսել
 կ'ուզեմ Շնորհալիի ոտանաւորները բերէք

տասնըիններորդ դարուն։ Բառեր միայն
 կ'ըլլաք տեղափոխած։ Հայ ժողովուրդը կը
 պակսի երկու գործողութեանց ալ ետին։
 Բայց փոխադրեցէք Պարոնեանի գործը,
 դարձեալ, տասներկուերորդ դարուն։ Ըսել
 կ'ուզեմ Մագիստրոսի և Սարկաւազի ար-
 ձակներուն տեղ դրէք իրաւ մարդու մը
 ապրումները։ Այսօր, նման հրաշքի մը գի-
 նով, դուք կ'ունենայիք մեր ժողովուրդը։
 Յ. Պարոնեան, առանց գրագէտ մը ըլլա-
 լու, արևմտահայ գրականութեան բոլոր
 քանքարաւոր մշակներուն հաւասար չափով
 մը բարիքն է ըրած մեր ժողովուրդին։ —
 բարիքը զայն, այդ ժողովուրդը, գեթ իր
 հիմնական քանի մը երեսներուն վրայ, վրե-
 ռապէս սեւեռած ըլլալու։ Հիմա ձեզ կը
 հրաւիրեմ որ փորձէք սա մտածումը ձեր
 ուզած օնէ արևմտահայ գրագէտի վա-
 տակին վրայ։ Պիտի զգաք տարազին մե-
 ծափառ ճնշումը ձեր գնահատութիւնը հար-
 ուածող։ Յուզիչ գեղեցկութիւն ու յուզիչ
 արժանիք։ Ահա Յ. Պարոնեանը։

Իր պարզագոյն կերպարանքին տակ
 այսպէս գրուած սեղան, Պարոնեան, նման
 իր գլխէ մարդոց շատերուն, նոյն ատեն
 հեղինակն է մէկէ աւելի հէքեաթներու ու-
 ռոնք հաւանաբար բան մը կ'արտայայտեն
 գրողին ինչպէս իր ընթերցողներու մտայ-
 նութեանէն։ Իր փառքէն անցնող մօտ երեք
 քառորդ դարը գրական իրողութիւն մը ա-
 ւելորդ անգամ մըն ալ կը յանձնէ մեր ու-
 չադրութեան, — ըստ որուն՝ մենք կը քա-
 ւենք մեր համբաւը գրեթէ միշտ, երբեմն
 տգիւտներով, երբեմն հիմնովին ուրացուե-
 լով։ Չեմ կարծեր որ յիսուն տարի վերջը
 սա օրերէն՝ Ալիշանի մը, Մամուրեանի մը,
 Ծերենցի մը, Պէրպէրեանի մը, Թէրզեանի
 մը փառքերը վերադառնան իրենց հասցե-
 ներուն։ Բայց Երուխանի մը համար, Թըլ-
 կատինցիին համար վերափառք մը մտածելի
 արդարութիւն մըն է։ Պարոնեան ութսու-
 նական թուականներուն մեծատարած գե-
 ղեցկութիւն մըն է, արևմտահայ ողջմտու-
 թեան առաքեալը, հայ ժողովուրդին պար-
 զուկ առաքինութեանց գումարը։ Պարոն-
 եան այդ թուականէն քառորդ դար վերջը
 յիշատակ մըն է, նոր հեգնողներու աւելի
 արդիական արդիւնքին ընդմէջէն գրեթէ
 կորսնցուցած իր փայլը։ 1920ին արեւելա-

(*) Համապատասխանի Բ. Հատորը (Կրտսեր Ռո-
 մանթիքներ) — Թերզեան, Սէրբեան, Աճեմեան, Պէր-
 պիտեան — ի լոյս ընծայիլէ ետք, այժմ մեր յար-
 գելի ընթերցողներուն կը ներկայացնենք հատ-
 ուած մը **Պէպի Իրապատեան** հատորին ամենէն
 յատկանշական անձին և մեր գրականութեան
 հանձարեղ երգիծաբան Յակոբ Պարոնեանի մա-
 սին, զոր տաղանդաւոր գրագէտ-քննադատ Յ.
 Օշական բացառիկ գեղեցկութեամբ և հմտու-
 թեամբ սեւեռած է իբրև Մոսկ. ԽՍԲ.

հայերը անոր արձանը կ'ատաջարկեն որ բարձրացուի Երևանի ամենէն փայլուն մէկ հրապարակին, ոչ անշուշտ միայն Պոլսեցիները ծիծաղելի ընող մարդու մը յիշատակը կոթողելու նպատակով, այլև մասամբ մը հպատակ այն մտայնութեան որուն ետին մենք կը զգանք հանճարային ողբերգութիւնը կարգ մը մարդոց: Այսպէս է որ իմ մէջ կը թարմանան անհեթեթ վարկածներ: Ամբողջ արևմտահայ գրականութիւնը Պարոնեանին միայն վերածող արեւելահայ գատաստանը մէկն է անոնցմէ: Գողջ, արգահատապին զիջուած շնորհք 1910ի մարդոց, արևմտահայերէն, Պարոնեանը արժեարելու... մէկ ուրիշը: Այս կեցուածքները մէկու մը դէմ որուն գործէն գրեթէ ոչինչ է մեռած այսօր, Հաւատարմի հեղինակը կը տպաւորեն սակայն: Կանխահամ է ուրեմն, համադրական ու վերջնական գնահատում մը Պարոնեանի գործէն: Նման հարցական մը զիս չի մտաներ տագնապի իր խումբէն ոչ մէկուն հետ: Որքան ալ կործանէք եղիան, կամ փոստընէք, այդ մեծ հիւանդին անկարող էք բարիք կամ չարիք հայթայթելու: Մեզսեղի է գործը: Որքան ալ ձեր հիացումը ոսկեզօծէք, չէք կրնար թարմացնել բանաստեղծ Ալիշանի մը եռամեծար փառքը: Մէջտեղն են Նաւաբ տաղարանները: Անմամանակ, սակայն, Պարոնեանի գործին վերջնական նկատառումը: Արեւելահայերը գործնական, արագ, չեն տնտնար սակայն: Պետհրատը հաւաքած է էտիրնէցի տոմարակալին ամբողջական գործը, ոչ անշուշտ միայն հրատարակչական մտահոգութիւններով, այլ լռելիայն խոստովանութեամբ մը անոր գործին հանդէպ: Արեւելահայերը այդ քայլով տուած կ'ըլլան անգրանիկ վաւերացումը հայ գրականութեան մեծ արժէքներէն մէկուն: Մի աճապարէք տպագրական ձեռնարկ մը զրական իրողութիւն մը իրրե գնահատել: Ոչ մէկ զինով անոնք պիտի յօժարէին Թէրզեանի մը, Պէրպէրեանի մը գործերը հաւաքել մէկ ծածօր տակ, այսքան կանուխ: Ու անցէք փաստէն անդին. արեւելահայերուն համար Պարոնեանի գործը այլևս ռահուած, անվերածելի, ազգային հարստութիւն մըն է, ինչպէս, նոյն չափերով ու տարրեր նկատողութիւններով՝ ազգային այդ հարստութիւնն է

գարձեալ, այս անգամ արևմտահայերուն համար, Արուստանեանցի գործը: Արևմտահայ երկրայանքը Պարոնեանը արժեարելու թերևս ծնունդ կ'առնէ անոր գրականութեան իսկ նկարագրէն: Պարոնեան մարդի ու բարքեր միայն տուած է: Եթէ այդ մարդերը իրրե անուն գոյութիւն չունին այսօր, բայց իրրե տիպար մերձաւոր իրաւութեամբ մը կը պատին մեր մէջ: Պարոնեանով սեւեռուած բարքերը սփիւռքին մէջ զեռի զօրու են որոչ համեմատութեամբ: Արուեստի գործերը ժամանակէն բացարձակ գերմանումով մը կը գտնեն իրենց փառքը, իմաստը: Ահա թէ ինչ ո՞ւր ինքզինքս չեմ զգար իրաւասու, Պարոնեանի հանդէպ գործադրելու վերլուծումը, այսինքն ասոր չափերը, կշիռները, զոր առանց լոյճահարութեան, մեծ փտահոլութեամբ մը նոյնիսկ գործածեցի Զարթօնքի Սերունդին, Ռոմանթիքներուն վրայ, զոր գործադրած եմ Իրապաշտներուն, Արուեստագէտներուն համար ալ: Պատիկ լուսաբանութիւն մը թերևս ընէ ձեզի մատչելի սա նկատողութեանց ծիւղն կորիզը: Ռոմանթիքներուն, Զարթօնքի մարդոց գործէն գրականը (որով կը զատուին այդ գործին միւս հանգամանքները), մեծ չափով մը անձնական ընդգրկելի, առանձնանալի է այսօր, չըրջանին քայքայներուն, այսօրմաններուն, գովեստին և ուրացումին ընդմէջէն: Ուրիշ խօսքով՝ այդ գործը կը մնայ հպատակ ամենէն առաջ հեղինակներուն հանգամանաւոր, պարագայական անձնաւորութեան: Ալիշան մը բանաստեղծ՝ իրրե գատասու կրօնքի, ազգային պատմութեան ու քիչիկ մըն ալ... երազանքի: Պէշիկիթաշիան մը բանաստեղծ՝ իրրե գործիչ, թատերագիր, դաստիարակ, ճառախօս ու միշտ քիչիկ մըն ալ... անձնական եղերերդակ: Կը ճըշդենք բաժինները ու կ'ըսենք մեր խօսքը: Այն պարագային ուր ինծի տրուէր հաստատել առնցմէ անդինը, այսինքն ցեղային խորունկ ձայներէ արձագանգ մը որոնք չեն կրնար տեղաւորուիլ ձոցը մէկ երկու սերունդի հոգեկան փորձարկութեանց (Պետրոս Դուրեան, Ռաֆֆի, Մեծարեւոյ, Տէրեան, Թէքէեան), վերլուծումը պիտի չըվախանար այս վերջիններուն սիրոյն ինքզինքը կանխել: Պարոնեան կ'ապրի տակաւին. գրեթէ թէ ինչ կը նշանակէ ասիկա:

վերլուծու՞մբ — գիտութեան — ստանցնելն է կեանքը թուղթի վրայ ու անցած կ'ըլլայ իր յաւակնութիւններէն անդին երբ կը փորձէ դարձեալ կեանքը որ անտարազելի է:

Եթէ ենթարկենք արեւմտահայ գրականութիւնը ժամանակի կշիռին, Պարոնեանի գործը մեզի կը ներկայացնէ հասկնալի միջին մը ընդմէջ երկու յիսուններու (1850—1950): Այս իրողութեան թելադրանքը: — Ա՛ն՝ որ անիկա կուգայ գրական ծանր երկունքի մը սկզբնական մղումէն, կը շկայէ մեր զարթոցիկն (առ է ա՛նունը գրական այդ երկունքին) համայնական ձգտութիւնէն, շատ աւելի հանգամանաւոր ձեռք մը, քանի որ նուաճում է գրեթէ օրը օրին, առանց գրականութիւն մը ծանրաբեռնող թեթեւ յաւակնութեանց մեղքերուն, այդ զարթոնքը կերպարանող մարդոց շքախումբին վրայ պայծառ լայնով մը որ ո՛չ վեհեակը ո՛չ ալ Բարիզը հոսեր, եթէ կը ներէք փոխարեութիւնը, այլ ըլլար միջին մը, այդ մարդոց թերութեանց ինչպէս պերճ արժանիքներուն, զանոնք, այս անգամ գործերը ինչպէս մարդերը երկարածակեղծ մեր լրջագոյն շարժումին (Սուպրես Եւրոպայ) ընդմէջէն, հասնելու համար մեր գարուն կէսերը մինչև, պաշտու տեղ, փոշիանալու տեղ ամբանալով, պահելով իր ներքին հուրքը, միշտ մեր ժողովուրդին միջին առաքինութիւններով պարտուն: Այս տողերը կ'իշխան թուղթին Պարոնեանի փառքին բովանդակ պայծառութեանը մէջ երբ մէկ կողմէն մեր նոր զոյգ գրականութեանց մէջ ո՛չ ոք՝ որ մըտածէր ծաղրին. ու ո՛չ մէկ արամազրութիւն՝ մեր անցեալը օտանակոսելու, գէթ գրական այդ սեռին ճամբաներով: Փո՛րձը՛ այդ փառքը ստուերելու, արեւմտահայոց մէջ կը խորհիմ թէ վրիպած է, թերևս այն պարզուկ փաստով որ ժամանակը իր կիսադարեան կշիռը չէ խնայած անոր ներքին constitutionին: Մեռելէն կ'իշխան ամենէն առաջ զարդը, ներկը, փոշին: Այսօր Դելիգոս Արժունի մը շաղկեր անշուշտ, բայց Պարոնեանի Արժունի աւելի իրաւ է քան Մշակի տէր և անօրէն գործիչը: Ու հարկ կ'ա՛յ մեծ տարազներ գործածելու որպէսզի բացատրուի այս հրաշքը որ օրիշ բան չէ եթէ ոչ առեւտր ինքնին: 1870ին,

Յուլիաներու և Նոստրոմերու կոթողային փառքի շրջաններուն որո՞ւ մտքէն կ'անցնէր որ եռամեծ քերթողը, պատմաբանը երեսուն տարի վերջը յարելինական հակայ մը միայն պիտի գառնար, այսինքն փառքէ մը ազատելու, զայն մոռացման անգունը նետելու արարքին քառութեան նոխազ մը, 1940ին երջանիկ, երախտաւոր մեռել մը որմէ անունն իսկ հազու կը յիշուի: Ասիկա ոչ հրաշք է սակայն, ոչ ալ հրէշութիւն: Աշխարհի փառքերուն, ինչպէս գրականքներուն մէկ է ճակատագիրը: Պրպտեցէք զիււանները գովեստներուն որոնք մարտոց (pile) կազմեցին ժժ. դարու մեծ բանաստեղծներուն անձն ու գործը զիւցազներգող (ստարներուն զիմեցէք մանաւանդ) ու ըսէք թէ քանի՞ քերթուած կ'ազատի աննցմէ: Մե՛նք, 1910ին, Օտեանի Փաշտուլն իր ըստեղծած խանդավառութեան շուքով պահ մը թուեցաւ թէ կը գերազանցէր Աշտուլն Յուլիան շարքին կշիռը: Այսօր: Անհոտոր, գրելու արարքին հանդէպ պատարանքէ վերձ, գէպքերու միայն սպասարկու ու բարքերու փառքին համար խենթ իմ սերունդը կը վերագառնայ իր սխալէն, գրեթէ մոռնալու համար գաղփազփուն շնորհները Օտեանի հեղեութեան, բառական միջոցներով ու ժպտուն, համով սրամտութեամբ մը միայն սնանդ: Ի վերջոյ Մաշտուլն հայ զիւզ մը չէր իր օրին որպէսզի, այսօր, այդ շնորհներուն ցնդումէն վերջը (գրական գործերն ալ մարդկային ունին ճակատագիր ու ... աղուամազը՝ երկաստարգութեան որուն գիրն է դարձեալ թափիլ, երբեմն մահէն առաջ) գրականութեան պատմիչ մը փորձէր զայն արժեարեկ յետնագոյն զիջողութիւն մը ընելով հոն փրկուած բարքի մթերքին: Միջոցը Տէր Դաւիթ կուգայ անշուշտ Պոլիսէն: Բայց ո՛ր Պոլիսէն: Այսօր արտօնուած ենք այդ հարցումը գնելու, Օտեանին բուր գործին համար ալ ուր քմայքը (ինք պիտի ըսէր Ֆանթազին) կը մնայ տիրական ազգակ ու երգիծանքը՝ չօրրորդական միջոց մը այդ քմայքը համեղելու: Դիտեցէք Օտեանին գիրքերը վրայէ վրայ: Հոն ձեր Օտեանին գիրքերը քանակը չի բուեր լեցըլ գանելիք բարքին քանակը չի բուեր լեցըլ նեղու, օրինակի մը համար՝ Պոլսոյ մը Պոլսոյ Մաշտուլն մէջը: Մի ըսէք թէ հեղեութիւնը և բարքերու մթերքը տարբեր իրողութիւններ են: Կ'ըսեմ որ զրոզի մը ամենէն վա-

ՊԱՏՄԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Պ Ա Պ Ա Ր Թ Ա Կ Ո Ւ Ն Ի

աւելի հաւատարմութեամբ սեւեռելով: Պո-
լիսին ամենէն իրաւ արտայայտութիւնն է
անկա: Միակ այս ծառայութեան գինով
անկա իրաւունքն ունի իմ ամենախոր յար-
գանքին, հիացումին: Կրնայ պատահիլ որ
ժամանակը յաղթահարէ արեւմտահայ գրա-
կանութեան ամենէն բարձրահայեաց փառ-
քերը, ամենէն բարձրագիր արժէքները,
փարկերը, համբաւները: Իմ կարճ կեանքս
որքան շատ տեսաւ այս բարձրակասոյց
նշակներուն գեանի հաւասարումը: Ատոր
համար է որ, շատ մը օրինակներու մէջէն,
լիմ զարմանար Սիւրմանթոն ընդոտնող ու-
րացումին — ես ապրեր եմ այդ բանաս-
տեղծին փառքը իր լման պերճութեանը
մէջ — ու մատնուեր խոռովքի: Պարոնեա-
նին ուրուականը չի տառապիր դարձեալ
տառապանքը Աւետիս Ահարոնեանին խա-
ւարման: Փոխուած չէ, սա տողերուն զը-
ուած պահուն, մեր ճակատագիրը: Այսօր
ալ մեր տղաքը կը մեծնան զրկանքին, ա-
նթութեան, հոգեղէն սպանդին զարհու-
րանքին մէջ: Փոխուած են սակայն այդ ա-
մէնը դիմաւորելու մեր եղանակները: Ու
ինչ դժբախտութիւն որ ասոնցմէ մէկն ըլ-
լայ այն արժեքը որ կարգախօս է
գործեր: Սփիւռքի աջ թեւը՝ իր կուռքե-
րուն: Զախը՝ իր կիրքերուն: Արեւմտահայ
գրականութիւնը՝ ամայաստան: Այս com-
plexներուն ընդմէջէն է որ սփիւռքի տղաքը
կոնակ կը գործնեն այն ամէն պատկերնե-
րուն, գործերուն, ձայներուն որոնց ներսը
մեր գերութեան, ցաւին մէկ արձագանգը
կը կարծենք վերագալ: Զեմ զարներ հա-
ւարին շեփորը: Մեզի կը սպառնան իրենց
ընկերներովը: Թող զան բարի այդ ընե-
լիքները: Բայց թող մեան զգոյշ անարգելէ
հոկայ փառքը արեւմտահայ իրաւ գրագէտ-
ներուն: Երկու պոռնիկի պատմութիւն,
չորս կտոր սրամիտ, լաւ գարձուած հայ-
հոյութիւն ու քաշքշուք չեն կրնար զի-
րենք իրենց աչքին մեծցնել: Պարոնեան
իր կեանքովը վճարած է փրկանքը մեր
գրականութեան, իր գործով՝ պարտքը չըը-
ջանային ճաշակներուն, նորոյթին քմահա-
ճոյքներուն: Անիկա գտած է իր յիշատա-
կարանային գեղեցիկութիւնը: Արեւելահայե-
րուն պիտի իյնար փառքը զինքը իր պան-
թէնը առաջնորդելու:

Իր մեծ հօր Սոսրովի օրով նախարա-
րական ազգամիջեան կոիւնները, յետոյ իր
հօր Տիրանին կողմէ նախարարներու հետզ-
հետէ շեշտուող ազատամբական ելոյթները
գոսպելու և Արչակունի գահին գերիշխան
հեղինակութիւնը պարտադրելու համար
ձեռք առած բռնի և յաճախ արիւնալի մի-
ջոցները, ստեղծեր էին կացութիւն մը՝ որ
խանգարած էր պետական ներքին կարգ ու
սարքը, և տեսակ մը անիշխանութիւն յա-
ռաջ բերած: Այսպէս, զոր օրինակ, այն
Նախարարները որոնց վստահուեր էին կա-
ռավարական և զինուորական պաշտօններ,
ինչպէս բանակի հրամանատարութիւն կամ
երկրի հազարապետութիւն (այժմեան ա-
ռոււմով համազօր ներքին գործոց նախա-
րարութեան), կամ պաշտօնագուրկ եղած
էին, կամ իրենք սրբողելով ձգած հեռացած:

Յիշենք, որպէս օրինակ, Մամիկոնեան-
ներու պարագան: Երեք եղբայրներն ալ
Տիրան թագաւորի հետ բախում ունեցած
ըլլալուն, իրենց պաշտօններէն հրաժարե-
լով հեռացած էին արքունիքէն և մեկուսի
կը բնակէին հեռաւոր Տայքի մէջ⁽⁸⁰⁾:

Այս մէկ պարագան, միւսներէն աւելի
երիտասարդ Արչակ թագաւորին ցաւ առ-
թած ըլլալու էր: Քանզի ան, որպէս երե-
խայ կամ մանուկ, իր հօր կողմէ յանձնուած
էր Վասակ Մամիկոնեանին կրթութեան և
զինավարժութեան համար: Վասակ, քէնու-
տած Տիրանէն, մանուկ Արչակը թագաւո-
րին յանձնելով՝ հեռացած էր արքունիքէն:

Ներքին խաղաղութիւնը վերահաստա-
տել անմիջական անհրաժեշտութիւն էր:
Նախարարական գահերու աստիճանները
— միշտ այնքան կազ ու կուռի պատրաստի
պատրուակ — Արչակ վերահաստատեց ըստ
նախկին թագաւորներու օրով հաստատուած
կարգին: (Բայց կ'երևի նախանձաւար իշ-
խաններ այս կարգը կը յարգէին՝ միշտ
խառնակելով զայն: Որովհետեւ կը տեսնենք

Յ. ՕՇԱԿԱՆ

(80) Փաւստոս, Գ, 18:

թէ քանի մը տարիներ վերջ ներսէս մեծ կաթողիկոսը միննոյն զլիսացաւէ պլտի տառապիւ։ Ապագային, մեծահոջակ Հայրապետը դարձեալ քրտինք պլտի թափէ այս կարգը կայունացնելու։ Այսպէս, Արշակ թագաւոր կը հաստատէ «մեծամեծները իրենց գահերուն, գործակալները իրենց ատիճաններուն»։ Եւ զլիսաւոր մեծ գործակալութիւնը — հազարապետութիւն — կը յանձնէ «չլինականներուն շէնացնող Գնունեաց ցեղին»⁽³¹⁾։

Երբ այս կարգադրութիւնները կ'ընէր, արդեօք Արշակ թագաւորի մաքէն անցե՞ր էր թէ շատ չանցած, քանի մը տարի վերջ, ինք ա՛յ աւելի յամառ, անզիջող և արիւնալի պայքար պլտի մղէր հայ նախարարներու դէմ՝ քան իր հայրը Տիրան։

Մամիկոնեան երեք եղբայրներ, թագաւորի հրամանին անսալով, վերագործան իրենց ինքնակամ աքսորէն։ Յիշենք երեքին ալ անունը, որովհետեւ մեր պատմութեան ընթացքին պլտի հանդիպինք այս երեքին ալ իրենց տարբեր տարբեր եղերական վարձաններով. դաւաղրական, հերոսական և դաւաճանական։ Առաջին երկուքը, Վարդան և Վասակ⁽³²⁾, երրորդը՝ Վահան⁽³³⁾։

Անդրանիկ եղբայրը Վարդան, տոհմին նահապետն շանակուեցաւ թագաւորէն։ Միջինը, Վասակ, մարմնով փոքրակազմ⁽³⁴⁾ Արշակի սգայեակը, կը կարգուէր սպարապետ։ Իսկ Վահանն ալ՝ գորապետ։

Այս տարիներուն Հայաստանի պետական կազմի մէջ չորս իշխաններ կը թուին ըլլալ ամենաազդեցիկ, թերևս ալ երիտասարդ Արքայի զլիսաւոր խորհրդականները — Արշաւիր Կամսարական, Անդովկ Սիւնի, Վասակ Մամիկոնեան և Մեհենդակ Ռշտունի։ Սա մեղի ենթադրել կուտայ ուշադիր ընթերցումը Փաւստոսի՝ Փառէնի կաթողիկոս ընտրութեան մասին գրածը⁽³⁵⁾։

Կաթողիկոսութեան յիշատակումը այժմ

մեր ուշադրութիւնը կը դարձնէ Հայրապետական Աթոսին։

Երբ Արշակ զահ կը բարձրանար, Կաթողիկոսը արդէն մեռած էր⁽³⁶⁾։

Սա առաջին Կաթողիկոսն էր որ, ըստ Խորենացիի, Լուսաւորչի սերունդէն չէր, Ըստ Փաւստոսի, երկրորդը ոչ — Լուսաւորչեան կաթողիկոսներուն։ Տիրան թագաւոր, Լուսաւորչի թոռ Յուսիկ Կաթողիկոսի հետ վէճ ունենալուն, և զայն սպաննել տալէ վերջ, պլտի չհանդուրժեար ուրիշ Լուսաւորչեանի մը, եթէ կար, Կաթողիկոսական Աթոս բազմելուն։ Փառէն և Շահակ սղբսեցիտ էին, Շահակ Աղբիանոս Եպիսկոպոսի սերունդէն, որոնք մրցակիցներն էին Լուսաւորչի ընտանիքին հայրապետական զահի համար։ Փաւստոս կը բացատրէ թէ այդ ստեն Գրիգորի տունէն կաթողիկոսական պաշտօնին արժանի մէկը չկար։ Ինչ որ ալ ըլլայ, Տիրան թագաւոր թշնամական վերաբերում ունէր Գրիգորի տան, և թոյլ պլտի չտար այդ ընտանիքէն սեւ մէկուն՝ սպանուած Յուսիկին տեղը զբաւելու, ո՞րք սրտին դէպի Տիրան։

Հիւստ Տիրան թէև ողջ էր, բայց այլևս թագաւոր չէր, և կուրացած՝ մեկուսի կ'ապրէր։ Իսկ Կաթողիկոսը արդէն մեռած էր, և ճգնաժամ մ'ալ ստեղծուած թափուր Աթոսի շուրջ։

4. ԵՐԻՏԱՍԱՐԳ ԸԱՅՐԱՊԵՏԸ

Եթէ որդիին ծանօթանալու Զանքիդ մէջ՝ հայրը ուշադրութեան առարկայ դարձրես, ապահար գարմանքդ չես կրնար զսպել և կ'ըսես, ի՛նչ պտուղ է այս, և ինչպիսի ծառ է։

Ահա երիտասարդ զինուորական Աթանազիւնէս, Յուսիկ Կաթողիկոսի գաւազը։

Ան ամուսնացած է Տիրան թագաւորի Բամբիշ անունով քրոջ հետ⁽³⁷⁾։ Այդ ստեն,

(31) Փաւստոս, Գ. 2.

(32) Փաւստոս, Գ. 2.

(33) Փաւստոս, Գ. 50. Մետրոպ երէց չորրորդ եղբայր մըն ալ կը յիշէ, Վրուժ. Բայց Փաւստոսի և Խորենացիի լուսթիւնը անոր մասին կը ստիպեն զիս անտես առնել այս մէկը։

(34) Փաւստոս, Գ. 54.

(35) Փաւստոս, Գ. 16.

(36) Այս Կաթողիկոսը, ըստ Փաւստոսի, Շահակն էր, ըստ Խորենացիի Փառնեբոսէր (Փառէն կոչուած Փաւստոսէն), Ըստ տեղը չէ քննելու թէ ինչո՞ւ Խորենացիին Յուսիկ Կաթողիկոսէն վերջ կը յիշէ միայն Փառէնը, մինչ Փաւստոս՝ Փառէն և ապա Շահակ։ Մեր այս պատմութեան ընթացքին համար ալ կ'արեար չէ այդ։

(37) Փաւստոս, Գ. 19. Գ. 3. Օրմանեան Արքեպիսկոպոս կը զրէ թէ Յուսիկ ամուսնացած պէտք

որևէ ատեն, թագաւորական ընտանիքի փեսայ ըլլալ, նոյնիքն թագաւորին քեռայրը, բացառիկ պատիւ մըն էր, որ առհասարակ բախտաւոր փեսային փառասիրութիւնը անհունս կը հրահրէր: Հպարտ անգոտանք ղէպի երէկի հաւասարները, կամայական սանձարձակ գործունէութիւն, ետին ինքնահաւան պանծացումը, ամբարտաւանութիւնը շփոթել արժանիքին հետ, և մահկանացուները վարող պարտադիր օրէնքներէն վեր և անոնց գերադաս ըլլալու համոզումը՝ յաճախ կը կաշկանդէ ու կը խաթարէ ինչ որ առաքինի էր իր մէջ:

Աթանազիոնէսի պարագային, յոռեգոյնները այս յատկանիշներուն տիրապետեցին իր անձին և անհատականութեան: Մոռցաւ, աւելի ճիշդ ըլլայ ըսել, ծաղրական արհամարհանքով անտեսեց թէ ինք կ'աթողիկոսի մը զաւակն է: Աւելին: Իր հայրը կ'աթողիկոս, իր մեծ հայրը, համբաւաւոր Վրթանէս կ'աթողիկոս, իսկ Վրթանէսին հայրը՝ Գրիգոր, արդէն սրբացած առաջին Հայրապետը:

Յուսիկ կ'աթողիկոսի մահով, Աթանազիոնէս՝ իր եղբորը՝ հետ միասին ժառանգ կը ստանային կալուածային հսկայ հարստութիւն: Եկեղեցաց զաւառի մէջ Թիւ աւանը, Գրիգորի կալուածը⁽³⁸⁾, Գարանաղեաց զաւառի մէջ Թորգան գիւղը, ուր թագուած

էին Գրիգոր, Վրթանէս և Յուսիկ⁽³⁹⁾, ապա նաև Հայաստանի առաջին մայր եկեղեցիի սրբազան վայր Աշտիշատի մէջ ալ հաւանարար հօրենական կալուածներ ունէին:

Հարստութիւն, արքայական ընտանիքի փեսայանալ, Աթանազիոնէսի հաճոյատէր կենցաղավարութիւնը մղեցին ղէպի լպրծուն զառիվայրը ցոփութեան:

Ան, «անխրատ ստահակ», որ իր սննտի մարմնաւոր ազնուականութեամբ և ազգականութեամբ պարծենալով՝ զինուորական կեանք ընտրեց⁽⁴⁰⁾:

Զինուորական ասպարէզը ալ աւելի ձեռնառու կ'ըլլար իր ծոյլ հեշտասիրութեան: Հագուած սքուած, զոհարագարդ սուրը մէջքին, սոնքալով, անհերոսը կը դառնար այն լայն ու լայն ճամբային, որ թերևս մանկութեան ատեն իր հողերական հօրմէն լսած էր թէ զժոխքի ճամբան է, բազմապիսի հաճոյքներով վիտացող:

Եւ Աթանազիոնէս առանձին չէր այդ ճամբուն վրայ, ոչ միայն իր եղբայրն ալ իրեն հետ էր, այլ սրողեր, վարձակներ, զուսաններ և ծաղրածուններ⁽⁴¹⁾:

Այսպիսի ցոփ հայր մը ինչքան մտահոգ կրնար ըլլալ իր միակ զաւակին կրթութեան: Թերևս ան ըսած կրնար ըլլալ թէ իր սիրունիկ մանչուկը ներուէս, երբ մեծնայ՝ պէտք է իր հօր պէս զինուորական ըլլայ և կեանքը վայելէ լիուրի, և ոչ թէ իր Յուսիկ պապուն պէս սկանանց շորեր հագած հողերական զառնայ:

Եւ իրաւ ալ, ներուէս պահ մը զինուորական պիտի ըլլար:

Արդեօք ո՞վ էր որ Աթանազիոնէսի այս որդին, զիս մանուկ հասակին կեսարիա շրկեց: Մանաւանդ անուղղայ և անառակ հօր մը, իրրև օրինակ, մանուկի միտքը գրաւելու և ապա աղարտելու սարսափեցուցիչ հեռագտակներն ալ միշտ ներկայ էր: Մա՞յրը արդեօք:

Ամենայն հաւանականութեամբ մանկան մեծ հայրը՝ Յուսիկ: Արկու զաւակներուն ամբարիշտ կենցաղավարութենէն դառնացած, և բոլորովին յուսահատած անոնցմէ միոյն կամ միւսին հայրապետական գահին

է ըլլայ 18 տարեկանին Տիրանի քրոջը և ոչ թէ աղկան, ինչպէս կը վկայէ Փաւստոս (Գ. 5). Թրմանեան աւելի տրամաբանական կը գտնէ որ Յուսիկի երկուորեակ մանչ զաւակները ամուսնացած ըլլան Տիրանի զուստրերուն հետ, իսկ Յուսիկ Տիրանի քրոջ հետ. Դժուար է մեզի համար որոշել թէ քանի՞ տարեկան էր Տիրան երբ զան արձարացաւ: Ըստ Փաւստոսի, մանուկ Յուսիկին չկը անուցանէր Տիրան, և արքայորդի Տիրան իր զուստրը կենութեան տուաւ Յուսիկին...»: Արեմն Տիրան զիս թագաւոր չեղած Յուսիկը իրեն փեսայ կ'ըլլար: Արքան առաջ, Ձեռք գիտեր, Յուսիկը ամուսնութեան ատեն չմեղակահասակ էր կ'ըսէ Փաւստոս. Մանկահասակը քանի՞ տարեկան եղած կրնար ըլլալ: Ձեռք գիտեր: Թրմանեանի հետ համաձայնիք կամ ոչ, Աթանազիոնէսի մասին պատմածին շատ տարբերութիւն չընէր, և թէ ան թագաւորի քրոջ տեղ՝ զստեր ամուսնացաւ, ալ աւելի սերտ պիտի ըլլար իր կապը արքայական ընտանիքի հետ: Այս պարագային, սակայն, մենք Փաւստոսի ըսածին համաձայն ենք:

(38) Փաւստոս, Գ. 2.

(39) Փաւստոս, Գ. 2, 11, 12.

(40) Փաւստոս, Գ. 13.

(41) Փաւստոս, Գ. 19.

իրեն յաջորդ ըլլալէ, միաժամանակ նախանձտանդիր կաթողիկոսութիւնը, որպէս ժառանգական իրաւունք, Գրիգորի ընտանիքին մէջ պահուելուն, Աթանազինէսի որդւոյն վրայ սեւեռած իր ամբողջ յոյսը, մանուկը կը զրկէր կեսարիա, Լուսաւորչի ընտանիքին համար յաւէտ սիրելի ոստան, որ Փոքր Ասիոյ լուսաւորութեան կեդրոնն էր:

Կապագովկիոյ այս մայրաքաղաքը, կեսարիա, մեծափարթամ քաղաք էր: Ներսէսի հոն զրկուած տարին, թերեւ 330 կամ 332 թուին, դեռ նորահաստատ Կոստանդնուպոլիսը հնադարեան կեսարիոյ հետ չէր կրնար մրցիլ: Թէև նոր մայրաքաղաքի անունն ու փառքը, շնորհիւ Կոստանդին կայսեր քաղաքապետի ջանքերուն, շատ շուտ պիտի հռչակուէր: Հոն պիտի երթար նաև ներսէս՝ կեսարիայէն Հայաստան գառնալէ առաջ:

Բազմամարդ կեսարիան պիտի դառնար, մանաւանդ Չորրորդ դարուն, քրիստոնէական մեծ կեդրոն: Բնակիչներու ճիշդ թիւը դժուար է որոշել, ինչպէս այդ ատենուայ բոլոր մեծ քաղաքներուն: 260ական թւականներուն, երբ Շապուհ Ա. Սասանեան արքան զրաւեց կեսարիան, քաղաքը 400.000ի մօտ բնակչութիւն ունէր⁽⁴²⁾:

Մանուկ Ներսէս, ի բնէ ուշիմ, արթնամիտ և զործունեայ, կատարեալ հակապատկեր իր ստահակ հօր, կեսարիոյ մէջ, կարող քրիստոնեայ դաստիարակներու խնամքին յանձնուած կը ստանար և կ'իրազնէր հիմնական ուսմունք, զարգացնելու իր միտքը, ի յայտ բերելու և ուղղելու իր հօգիքին և սրտին մէջ մարդասիրական առաքինութեանց կոկոնները, որ շատ չանցած, իր չափահասութեան, պիտի ծաղկէին Հայաստան աշխարհի խոպան և տարամերժ հողին վրայ, լիուրի պայծառութեամբ, և այդ ալ իր իսկ անխնջ ջանքերով:

Որոշապէս չհնք կրնար ըսել թէ կեսարիոյ զպրոցի քանի մը աշակերտները, որոնք ապագային Քրիստոնեայ Եկեղեցոյ հռչակաւոր սուրբերէն հղան, ներսէսի գասընկերները եղած ըլլային: Չոր օրինակ, Բարսեղ կեսարացի, եզրայրը՝ Գրիգոր Նիւսացի, և Գրիգոր Նազիանզացի: Ներսէսի աշակերտութեան ատեն անոնք դեռ պզտիկ

էին: Բարսեղ ծնած էր 329ին, եզրայրը 330ին, Գրիգոր Նազիանզացին 329ին: Բայց թէ վերջէն ներսէս պիտի ճանչնար զանոնք, մանաւանդ Բարսեղը, և ներշնչուէր անկէ, տարակոյս չկայ:

Բազմահարուստ ընտանիքի զաւակ, աւելին, Արչակունի արքայական ընտանիքի անդամ, ծախք չէր խնայուած ներսէսի գաստիարակութեան համար: Ան չճաշակեց աղքատութեան կամ նիւթական անձուկ պայմաններու մտահոգութիւնը, որ իրմէ յետոյ կեսարիա, Կոստանդնուպոլիս, Անտիոք և Եղիսիա վազող ուսումնասինչ հայ երիտասարդներու գրեթէ ամենուն վրձակուեցաւ:

Քրիստոնէական վարդապետութեան վըսեմագոյն առաքինութիւններու կենսանորոգ ցանցին մէջ անքակտելիորէն ազուցուած իր հողին, մշտարթուն աչքերով զիտեց՝ նախ կեսարիոյ և ապա Կոստանդնուպոլսոյ մէջ զործնական ապացոյցները Քրիստոսի քարոզներու կիրարկման. զպրոց, հիւանդանոց, եկեղեցի, վանք և աղքատանոց: Տեսաւ, ազդուեցաւ, խանդավառուեցաւ և սիրեց, առանց մտքէն իսկ անցնելու այդ ատեն, թէ օր մը անառակ հօտի մը քրիստոնեայ հովիւր պիտի ըլլար, մինչ իր շուրջի համատարած խաթարեալ բարքերը մարտահրաւէր պիտի կարգային իր գիտութեան, զգացումին և ձեռնբերեցութեան: Այո՛, առանց մտքէն իսկ անցնելու, քանզի ինք, ազնուական գասակարգի ընտրեալ վերնախաւի անդամ, երբ իր ուսումը լրացնէր, զիտուորական ասպարէզ պիտի մտնէր, զհարազարդ կամարով և ականակուռ պատեանով սուրը մէջքին կապած:

Կեսարիայէն ներսէս ճամբորդեց Կոստանդնուպոլիս, նոր Հոռոմ, որուն հռչակը սկսած էր տարածուիլ և երկրի ամէն կողմերէն բնակիչներ հրապուրել:

Իր ճամբորդութեան նպատակը ուսում չէր: Երիտասարդ իշխանը նորահաստատ մայրաքաղաք կ'երթար ամուսնանալու Ասպիոն մեծ իշխանի ազջկան հետ⁽⁴³⁾:

(42) Իօրենացի, Գ. 16: Մեսրոպ Երէցի ժգարուն վերջերուն զրի առած ներսէսի կենսագրութեան մէջ ըսածը թէ ներսէս կեսարիոյ մէջ կ'ուսանէր իր կնոջ հետ միասին, որուն անունն էր Սանդուխտ, Մամիկոնեան ցեղէն, անընդունելի է: Մամիկոնեան ընտանիքի հանդէպ իր

(42) Rawlinson, Vol. I., p. 83.

Երբ Ներսէս իմացաւ որ իր մօրեղբոր որդին⁽⁴⁵⁾ Արշակ, Հայաստանի թագաւոր եղած է, որոշեց վերադառնալ հայրենիք:

Հայաստան հասնելուն, երիտասարդ թագաւորը իր նոյնքան երիտասարդ, գանգարանք, բարեձեւ մօտիկ ազգականին զինուորական ատրիճան կուտար, և կը նշանակէր զինք արքայական Սենեկապետ⁽⁴⁶⁾:

Ներսէս իր հարսին հետ Հայաստան հասնելուն, և արքունիքի մէջ իր բարձր պաշտօնին ձեռնարկելուն, Կաթողիկոսական աթոռը թափուր էր:

Տիրան թագաւորի հակառակութիւնը Լուսաւորչի ընտանիքին, և ատոր անդ Աղբրանոս Եպիսկոպոսի ցեղը նախընտրելը քաջամտութիւն էր ամենուն: Այս պարագան՝ եկեղեցականներու մէջ համերաշխութեան զբոցովուելուն պատճառ եղած էր: Անոնցմէ շատ շատերը՝ Գրիգորէ և Վրթանէսէ ձեռնադրուածներ, խեթիւ կը գիտէին Տրդատ և Խորոսի, Լուսաւորչեան ընտանիքի համակիր և պաշտպան թագաւորներու յաջորդին, Տիրանի բուն հակառակութիւնը: Իսկ անոր՝ Աղբրանոսեան երեքնի քրմական ընտանիքին ցոյց տուած կողմնակցութիւնը, ժանտաւեղ երբ այդ ընտանիքի անդամներէն մին կաթողիկոսական գահ բարձրացուց, սմանց աչքին նոյնիսկ սրբապիղծ արարք մը կրնար թուիլ:

Սակայն հօր հակակրօնութիւնը՝ որդին չէր վարակած: Հայաստանի քաղաքական քառասյին վիճակին զուգընթաց խառնաչփոթ կացութիւն մըն ալ ստեղծուած էր հայրապետական գահին շուրջ: Եւ որովհետեւ Արշակ թագաւորի առաջին տարիններուն, Արքայի և իր խորհրդականներուն ձեռք էր ներքին ճակատը խաղաղեցնել, բնականաբար ուշադրութիւն պիտի դարձրէր նաև եկեղեցական ճակատին: Թագաւորը վերջապէս ըսելիք ունէր Կաթողիկոսի մը ընտրութեան մասին: Յիրաւի, ընտրողն իսկ էր:

Ահա երեք տարիէ ի վեր, զինուորական Ներսէս կը վարէր իր թագակիր ազգականին Սենեկապետի պաշտօնը: Իր շուր-

ջիններուն համար այս երեք տարիները բաւականաչափ ժամանակ էր ճանչնալու զինք: Ամէն ոք զարմացած ըլլալու էր երբ կը բազմատէր Ներսէս իշխանը իր հօր հետ: Երիտասարդին ուսումնական միտքը, բարոյական բարձր ըմբռնութիւնը, գործազուտ սիրտը և հաստատակամ անկաշառելի ազնիւ նկարագրը, զինք կարծես երկնառաք թեկնածուն կը դարձնէին այն գահին, որուն պատուանդանը՝ իր նահատակեալ մեծ հայրը Յուսիկ իր երիտասարդի արեւնով լուացեր էր:

Արքային Սենեկապետը զարմացմամբ լսեց ամենուն բերնէն իր անունը, որպէս միակ արժանաւոր թեկնածուն Կաթողիկոսութեան:

Իր զժկամակ բողոքները խուլ ականջներու հանդիպեցան: Իսկ բոլորովին չքացան երբ Արշակ թագաւորը պնդեց:

Առաջին արարուածը այս հողերական արամային յուզիչ էր: Թատերաբեմը արքայական պալատն իսկ էր:

Կաթողիկոս օծուելու համար, ըստ ընկալեալ կանոնի, ան պիտի զրկուէր կեօսարիա: Իայց հոն պիտի երթար և Կապադովիոյ արքեպիսկոպոսին ներկայանար ոչ որպէս զինուորական պաշտօնեայ, այլ հոգևորական:

Բազմամբոս արքունիքի մէջ, ամենուն աչքը իր վրայ, մարդարտագարդ սկի պատեանով սուրը քակեցին իր մէջքէն, յետոյ, իր բարձր հասակին այնքան վայելուչ ականահանոյ պատմուճանը առին վրայէն, և անոր հագցուցին կրօնականի անպաճոյճ սքեմը: Արտօսրի կաթիլ մ'ալ մենք կրնանք խառնել այն արցունքներուն, որ պալատականներու շատերուն աչքերէն հոսեցան, երբ սափրիչը անոր գանգուր մազերը կը կտրէր և Ներսէսի զէմքին զբաւելութիւնը կը փոխուէր: Ապա ձերուհի Փաւստոս Եպիսկոպոսը կը մօտենար իրեն և զինք սարկաւազ կը ձեռնադրէր⁽⁴⁶⁾:

Կեսարիա ճամբորդութիւնը, 311 ին, յազթապանձ շքերթ մըն էր: Ներսէսի ընկերակցող իշխանական կազմը ցոյց կուտայ թէ արքունի Սենեկապետին ընտրութիւնը ընդհանուր հաւանութեան և խանդավառութեան տրժանացեր էր: Ինչպէս նաև

⁴⁵ Էբր պաշտամունքի հասցնող Փաւստոսի լուսութիւնը այդ մասին վճռական է: Տես Յատկուած Գ. Ներսէս Կաթողիկոս:

⁽⁴⁶⁾ Ըստ Օրմանեանի, մօրեղբայրը:
⁽⁴⁷⁾ Փաւստոս, Գ. 3:

⁽⁴⁶⁾ Փաւստոս, Գ. 3:

և հրահանգէ, պայման է որ գործազրուի ամենայն լրջութեամբ եթէ անակնկալ և անյաղթելի խոչնդոտ մը արդելք չէ հանդիսացած: Եռասուլքիչ և վհատեցուցիչ երեսոյթ մըն է պետի մը ամէն բանի մէջ անսպարեկն ու անհաստատ նկարագիր ցոյց տալը:

Որպէսզի առաջնորդ մը կարենայ որոշումի մը յանդիլ, պէտք է որ շատ զօրաւոր բարոյական ուժ ունենայ: Պարագաներ կը ներկայանան երբ որոշում տալը եթէ ոչ անհնար գոնէ շատ դժուար կ'ըլլայ: օրինակ, կը պատահին զէպքեր մարդկային կեանքի մէջ երբ մէկը պէտք է զոհուի ընկերութեան համար, բոլորին ապահովութեան համար: Առաջնորդը կրնայ, և պէտք է խիստ ըլլայ, անշուշտ իրաւունք չունի անգութ, վրեժառու և չարագործ ըլլալու:

Ծատ կարևոր է նաև որ իր շուրջ ունենայ նուիրուած օգնականներու խումբ մը որոնք իրենց կարգին փոքր որոշումներ կարենան հրահանգել: Հրահանգներու գործազրուիական համար, ընտրած պէտք է ըլլայ իր մասնագէտները որոնց հանդէպ հաւատք ունենայ, վասնզի անոնք ազատօրէն պիտի գործեն, և ան երբեմն պիտի քննէ իր մասնագէտներու գործը և ճշգէտ անոնց տեղեկութեանց վաւերականութիւնը: Փորձառու առաջնորդ մը զիտէ թէ կարելի չէ մանրամասնօրէն հետեիլ բոլոր փոքր պաշտօնականներու գործունէութեան, մասնաւորաբար անտեսումի կարևոր աշխատանքին մէջ, հետևաբար կը բաւականանայ զիտել տալով բոլորին թէ անձնական շահը պէտք է զոհուի ընդհանուրի շահին համար:

Առաջնորդը յարգանք պէտք է ներշնչէ իր պաշտօնականներուն, եթէ չյաջողի, անպատճառ երևան կուզան կասկածներ, դաւեր և անբաղձալի կացութիւններ: Մէկ կերպ կայ յարգանք ներշնչելու և պարտադրելու — արժանի ըլլալ ատոր: Մեծ առաջնորդ մը անտարակոյս մեծ անձնակա-նութիւն մը ունի: Պէտք չէ շփոթել անհատականութիւնը անձնականութեան հետ: Բոլորս ալ իրրև կենդանական էակներ մեր կազմաւորութեամբ անհատներ ենք, բայց անձնականութիւնը անհատականութենէն աւելի ոչի՛, գաղափարի և մանաւանդ նկարագրի հարց մըն է:

Անձնականութիւն ունեցող մարդը ուզ-

ղակիտրէն իր անձին հանդէպ հետաքրքրու-թիւն ունենալէ աւելի կը շահագրգռուի ընկերութեան բարիքով: Պատմութեան մէջ շատ են օրինակները: Հանրութեան սեփա-կանութիւնը անձնական շահու համար չգոր-ծածելը առաքինութիւն մըն է ուրիշ առա-քինութեանց նման որ առաջնորդ մը սիրելի կ'ընծայէ իր ժողովուրդին:

Առաջնորդը մէկ ձգտում կ'ունենայ, իր գործը և իր ասպարէզը: Ամէն տեղ և ամէն ասին չերևար, այս ձևով սխորժելի խորհրդաւորութեան մը մէջ պարուրուած կ'ըլլայ: Իր անունին շուրջ կեղծ առասպել-ներ հիւսելու փափաքը չէ անշուշտ այս-պիսի պահանջ մը իր անձին պարտադրելը, այսուհանդերձ նկարագրին է որ կը կառա-վարէ և կը հրահանգէ այնքան որքան ա-ռաջնորդը ինքը, իրրև մարդ: Տեղին է յի-շել Քիփլիկի մէկ գեղեցիկ պատմուածքը որուն մէջ կ'ըսուի թէ արկածախնդիր մարդ մը նկարագրի ուժով կը միացնէ իրարու շատ մը լեռնաբնակ ցեղեր և միահեծան կ'իշխէ անոնց վրայ: Բայց կը կորսնցնէ իր հմայքն ու զահը երբ իրեն ենթականերուն ազդիկներէն մէկուն հետ սիրահարելու չափ կը տկարանայ. այս ձևով ցոյց տուած կ'ըլ-լայ անոր թէ ինք միայն . . . մարդ մըն է: Վերքա՛ն մարդիկ անելանելի դժուարու-թիւններու մէջ կ'իշխան պարգապէս կնոջ մը հանդէպ տկար գտնուելնուն համար» ըսած է Նափօլէօն: Հոս պէտք է պարզենք ա-ռաջնորդին տիկնոջ դժուար դերը. անիկա պէտք է պաշտպանէ առաջնորդը աշխարհին դէմ, զգուշացնէ զայն իր ուժերը յուժպէտս վատնելէ, քայահապան հրեշտակը ըլլայ անորս իր տունը վերածելով խաղաղ վայրի մը և ոչ թէ ուրիշ փոքր պետութեան մը զոր կառավարելը երբեմն ամենէն դժուարն է . . . :

Անգամ մը, վարչապետի մը էակն արժանիքներուն մասին վիճարանութեան մը ատեն, մէկը յիշեց անոր հետորու-թիւնը, ճարպիկութիւնը, մասնագիտու-թիւնը, ուրիշ մը նկարագրի գիծերը, ուրիշ մը հմտութիւնը, և այլն. յիշուեցաւ նաև համբերութիւնը որ կարևորագոյն յատկու-թիւններէն մին է: Արդարև ոչ միայն վար-չապետին, այլև բոլոր պատասխանատու պաշտօն ստանձնողներուն համար համբե-րութիւնը շատ կարևոր ազգակ մըն է:

Վասնզի ընկերայնորէն միշտ ալ կը հանդիպինք ապուշ, անհեթեթ և անիմաստ արարքներու. առաջնորդ մը յաճախ կը հանդիպի ալսպիտի արարքներու, պարտի տուկալ ատոնց այնքան ատեն որ անոնք . . . բնական անհեթեթութեանց սահմանին մէջ կ'իյնան: Կը պատահի որ իր գաղափարները եղծուին և անճանաչելի դառնան նախանձոտ և սմեղուկ հոգիներով մանր պաշտօնեաներու կողմէ. այսուհանդերձ այս բոլորը, իրրև անխուսափելի երևոյթներ, պարտի հաշուի առնել և փոխանակ անսխալ մարդեր փնտաւելու որոնք գոյութիւն չունին և չեն ունեցած, փորձէ օգտագործել իր արամադրութեան տակ գանուող մարդիկը ինչպէս որ ատոնք գոյութիւն ունին և ոչ թէ ինչպէս որ պէտք է ըլլան:

Համբերութեան ուրիշ մէկ կերպն ալ անխոնջ ճիգն է: Երբ նպատակ մը յաջողած է, ճշմարիտ առաջնորդը չի մտածեր թէ իր երկրին բոլոր պահանջները և կարիքները տեսապէս կարգի գրուած են: Ոչ մէկ բան այս աշխարհի վրայ տեսապէս հաստատուած է: Ամենէն վտանգաւոր վայրկեանը կը սկսի յաղթութենէն վերջ, ճիշդ ինչպէս զօրաւոր մարդիկ կը խոցուին իրենց զօրաւոր կարծուած տեղերէն: Լաւ խնամուած պարտէզ մը սէզներով կը լիցուի երբ ժամանակ մը պարտէզին հոգ չտարուի: Նմանապէս հարուստ և զօրաւոր երկիր մը պէտք չէ երկար ատեն անխնամ և անտխափին ձգուի, որովհետև գէշ քաղաքացիներ կու գան մէջտեղ — չեն գիտեր ուսկից — սէզներու պէս, որոնք տարիներու աշխատանքը կը խեղդեն և երկիրը որս մը կը դառնայ թշնամիին յարձակման առջև: Երկրի մը առաջնորդը նկատի կ'առնէ միշտ թէ իր ճիգերը տեսական արդիւնք չեն կրնար ապահովել եթէ ամէն առտու չի նորոգուին ատոնք:

Գաղտնապահութիւնն ալ կարևոր առաքինութիւն մըն է: Անգլիոյ Չարլզ Ա. թագաւորը անգաղտնապահութեան հետեւանքով կորսնցուց իր գահն ու իր զուլիսը: Անխոնամ գտնուեցաւ իր գեղեցիկ թագուհին պատմելով նոր խորհրդարանի կազմութեան համար առնելիք իր քայլերուն մասին: Ան ալ իր կարգին պատմեց իր հաւատարիմ նաժիշաներէն միոյն որ բարեկամներ ունէր հակառակորդ խումբին մէջ,

զգուշացուց զանոնք մտաւուտ վտանգին առջև: Այսպէսով, երբ ժամանակը եկաւ գործելու, թագաւորը ինքզինքը գտաւ անակնկալի առջև: Ըսէ՛ք ինչ որ անհրաժեշտ է, ո՛չ աւելի ո՛չ պակաս և ըսէ՛ք ճիշդ ժամանակին. լուսթիւնը ազդակ մըն է հեղինակութեան զօրացման: Շատախօսութիւնը կը ցրուէ կեդրոնացումն ու մտածումը: Զօրավարներ, գործունեայ մարդեր ընդհանրապէս լուսկեաց են:

Այս բոլոր արժանիքներուն վրայ պէտք է աւելցուի նաև ֆիզիքական ոյժը: Առողջ մարմինը կ'աւելցնէ առաջնորդի մը հեղինակութիւնը, աւելի համբերատար, ճարպիկ և կամքի տէր զարմնելով զայն: Գունն ու արտրժակը պէտք է բնականոն ընթանան, վասնզի այս երկուքը մտքի արթնութեան հետ կապ ունին: Ողջմտութեամբ պաղարիւնը չկորսնցնել շատ բան շահիլ կուտայ առաջնորդին:

Շեշտեցինք նկարագրի դերը և արժէքը որուն զուգընթաց պէտք է աւելցուին իմացական կարողութիւնները: Փափաքելի է որ առաջնորդը ունենայ հմտութիւն և խտրապէս դատարարական ըլլայ: Պատմութիւնը և մշակոյթը ընդհանրապէս կարելիութիւնը կ'ընծայեն իր արամադրութեան տակ ունենալու ծանօթութեանց ամբողջութիւն մը որմով պիտի կրնայ թափանցել մարդկային հոգին խոզիոզ մեծ տագնապներու: Պատմութենէն կրնայ օգտուիլ, յստակ մտածումներ և տիպար հրահանգներ արտաբերելու: Ի մի բան, երկիր մը կատաւարելն ու բանակ առաջնորդելը արուեստի գործ է. գեղեցիկութեան senseը և ընկալչութիւնը ունեցող մարդ մը աւելի յաջող կ'ըլլայ իր մեծ պատասխանատուութեանց մէջ: Գիտական ճանաչումներուն արժէքը, միտքը զանազան տեսութիւններու և փորձակութեամբ ճշգրուած սկզբունքներու վարժեցնելն է. բայց իմաստասիրութիւն, պատմութիւն և դրականութիւն ուսումնասիրելով յաստիջ կուգայ լման մարդ մը որ կ'ապրի, կը շնչէ, կը զգայ աշխարհին հետ:

Ա. Մ.

(Մշտելու յաւերտ ինքն)

ՐԵՏԵՆՍԳՐԱԿԱՆ

(ԽԵԻ) ՅՈՎ, ՀԱՆՆԷՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ

= 11 =

Բ Ա Ն Ք Ս Ի Ր Ո Յ . — 8

Տ Ա Վ Գ Ա Ր Ն Ա Ն

Ա.

Ահայ եղև պայծառ զարուն, ծաղկեաց այգին ու պաղչանին,
Դաշտք ու լեռունք զարդարեցան, արօտ հանին ըզխիլանին:

Բ.

Գոյնքն ծաղկին ու հետ կապին, անուշանայ հովն ու քամին,
Ջագերն ծայն ածեն այգին, քաղցր կու զայ ծայն պլպուլին:

Գ.

Կու թանձրանայ շուքն ծառին, յորդոր գնայ ջուրն ի առջին,
Ձթեւն բերէր բոլոր վզին, սիրով խմէր զանուշ զինին:

Դ.

Այն վարդին գեմ չկայ զին, որ այն խնդումըն հանդիպին,
Բաւէլ զրախտն անմահութեան, որում եղաւ մարդն առաջին:

Ա.

Թէ չէր մահուն արն ու դժոխն, ու կամ սարսափ դատաստանին,
Նայ այս աղէկ էր զինչ ասաց եւե Յովանէս Թուրկուրանցին:

= 12 =

Բ Ա Ն Ք Ս Ի Ր Ո Յ . — 9

Ա.

Ես զրեզ տեսայ սիրով նստած, արևմտան արեգակունք,
Ձինչ պաղջայ մի որ կայ ի ներս, վարդ ու շուշան պայծառ ծաղկունք:

Բնագիր, Ա. էջ 118, Հմմտ. Տ. էջ 35:
Բ. էջ 429, Գ. էջ 313:
Վերնագիր, Տաղ Գարնան, ՏԲ:
Ա. 1. — ծաղկեալ այգիքն, Տ: Ծաղ-
կեց, Բ: — 2. — Լերինք, ՏԳ: յարօտ, ՏԲ:
Բ. 1. — Գոյնքն — Գուղքն, Տ: ու —
ի, Բ:
Գ. 1. — որդոր, Ա: — 2. — բերէ, Բ:

Գ. 1. — վարդեհուն, Տ: Եւ այն, Բ:
Ե. 1. — թէ մահըն չէր ու կամ մեռ-
նիլ . . . Բ: — 2. — . . . եւէլ . . . Թըլ-
կուրանցին, ՏԲ:
Բնագիր, Ա. էջ 119, Հմմտ. Տ. էջ 36:
Բ. էջ 425, Գ. էջ 314:
Ա. 1. — զեեզ, ԲԳ. զձեզ ԱՏ: արե-
գական, ԱԲԳՏ:

Բ.

Աչեր ունիս գէտ ըզծովեր, ուներ ունիս քան զթուխ ամպունք,
Շողման կլափ ու լար շրթունք, ու մարգարտէ շար առամունք:

Գ.

Թէ վարդապետն զրեզ տեսնու, մոռնայ զուսումն ու շատ գրունք,
Ամէն անծամբն ի դող կլնու, անցնէ զամառն ծմերունք:

Դ.

Քեզ ինչ խատար ես դիմանամ, եփ դու ի հալ հանես զլերունք,
Սիրով քակես բարձր բերդեր, ի գիլ հանես վէմք ու քարունք:

Ե.

Եեւ Յովանէս Թուրկուրանցի, զքեզ կու գովէ ոսկի տփունք,
Վախեմ թ' ի հուրն այրես զհոգիս, յերակ ուտն անքուն որդունք:

= 13 =

Տ Ա Ղ Ս Ի Ր Ո Յ

Ա.

Յանկարծակի մէկ մի տեսայ, որ կու ցողայր գունն երեսէն,
Թայցայ անկայ ի տեսլենէն, շողայր կաթէր լոյսն ի վրզէն:

Բ.

Աչերն է ծով, ունքն է թուխ ամպ, մագն է դեղծան ոսկի թելէն,
Ինքրն փօփայր գէտ զուռի փեղ, հըրով այրէր զերկիր ամէն:

Գ.

Ճոխազընաց, մանրաբայրող, քակող հոգիքըն ի մարմնէն,
Լուծֆն է ծածկեր զամէն աշխարհս, շաքար կաթէր իւր քարամէն:

Դ.

Երբ իմ աչերս ի քեզ դիպաւ, նայ վառեցայ գէտ մոմեղէն,
Եելազընաց ի վայր մնացի, զարհուրեցայ ի տեսլենէն:

Ե.

Եեւ Յովանէս Թուրկուրանցի, խիտտ մի հաներ զտաք ի ծըրէն,
Աղէկ սուրաթն երբ մեռանի, ցամբի զընայ գունն երեսէն:

Բ. 1. — ունիս զեղ, Գ. ունի, Ա. Աչուեր ունիք, ... ունիք ... ամպունք. Տ. ամպեր, Ա. ունի ունքեր, Բ. — 2. — Շողման կլափ, Տ. շողայր կլափն, Ա. շողայր կլափն ու լար, Բ.

Գ = Դ, Բ. 1. — զեղ, Բ. զձեզ, ԱՏ. Դ = Դ, Բ. 1. — Քեզ ինչ ... երբ դու ի հալ հանես, Բ. Չեզ ... Դուք ... հանէք, Ա. — 2. — քակես ... հանես, Բ. քակէք ... հանէք, ԱՏ. վեմք, ԲԳՏ. վէմ, Ա.

Ե. 1. — Թուրկուրանցի, ԲՏ. զձեզ, Տ. ըզքեզ գովէ, Բ. — 2. — թէ հուրն այրէ զհոգիս, Տ. զհոգիս, Բ. զհոգիք, Ա. յերակ,

Տ — անչէջ, Ա. որդուեմ, Տ. որթունք, Ա. Բնազիր, Չ = Ա. Չօպանեան, Հայ էջեր, Փարիզ, 1912, էջ 32. Հմմտ. Ք = Հայր. Ամս. 1935, Յլս. էջ 90, 1678-81ին գրուած Տաղարանէ մը.

Ա. 1. — յերեսէն, Բ. — 2. — ի տեսլենէն, Չ.

Բ. 1. — աչքերն, Չ. — 2. — Ձինքըն ճօհար գէտ, Չ.

Դ. 1. — ... հոգիքըն ի մարմնէ քակող, Չ. հոգի, Բ.

Դ. 2. — ի վայր զնացի, Բ. Ե. 2. — գոյն, Չ. յերեսէն, Բ.

= 14 =

ԱՅԼ ԲԱՆՔ ՍԻՐՈՅ Ի ՅՈՎՀԱՆՆԷՍԷ

Ա.

Գէնայ բահար, այլի բահար, այլի կու տան սիրոյ խաբար,
Ծով ծով աչեր եւ լուս քընար, ունրն է կեռեր քան ըզկամար:

Բ.

Ճակատդ է լուս ու լուսնրկար, բոլոր լուսին շամս ու դամար,
Վարսերդ ոսկի թելէ բաշած, վերայ անծինդ իջեր հաւսար:

Գ.

Երեսըդ վառ է ծիրանի, վարդ ըռէհան ու նոնուփար,
Ծոցդ է բաղայ վարդով ի լի, մարգրիտ ատմունրդ ի շարէ շար:

Դ.

Քո ծայնդ անուշ բաղցրեղանակ, բերնէդ ի վայր թափի ջուհար,
Այդ քո պատկերդ է լուսնղէն, այլ արեգակըն լոյս չի տար:

Ե.

Մարմինդ քո ճոխ բուսեր չինար, ու ճօծ կու տայ քան զուռ դալար,
Այդ անյատակ ծովուդ նըման, գերիս ի մէջըն դարւէդար:

Զ.

Հանցեղ նետով զիս խոցեցիր, որ այլ չունիմ բժշկարար,
Է՛ գեղեցիկ կերպի սուրաթ, որ է ստեղծուած նաշիս ու նիզար:

Է.

Նշդարենի ծառ եւ ծաղկեր, պտուղ կու տաս մուշկ ու ամբար,
Բեհեզ հագեր եւ ծիրանի, ծալբերդ ամէն մարգարտաշար:

Ը.

Քաղաք Խաթայ, Չին ու մաչին, ի Բուրսայու բերեալ պաշար,
Յայդ ճանապարհ որ կու քայլես, բուսեր շուշան եւ նունուփար:

Թ.

Կարմունջ կապեալ եւ ապիկի, եւ զիտ զինի ուրախարար,
Ով որ խըմէ ի քեզանէ, ուրախանայ սրբտով յօժար:

Ժ.

Արեկ իջնունք ի բաղչենին, ու բլբուլին էնենք նատար,
Որ ի բափուր վարդի սիրուն, ի շուռ կու գայ քան զխելադար:

ԺԱ.

Գարնանային ամիսն երբ գայ, հաւսար ծաղկի չորն ու դալար,
Ջրերը յորդոր գրնացք առնուն, ի լեռներուն թափին ի վայր:

Բնագիր. — Ս = էջ 269, Հմմտ. Տ. էջ 25: Ռ = Սուրխաթեան, Գր. Գոհարներ, Ա. էջ 422, առնուած Կոստանեանցէն: Ա. 2. — է կեռէր — կեռ էր, ՏՌ: Բ. 1. — ... և լուսքնար, ՏՌ: Լուսնրկար — լուսոյն, Ս: — 2. — ... վերայ մարմնոյդ եկեալ, ՏՌ: Գ. 1. — Երեսդ ի վառ ... նունուփար, ՏՌ: — 2. — ... ատմունքդ շարէ շար: Դ. 1. — ... թափուի, ՏՌ: — 2. — Այդ քո մատունքդ եւ ... Ս: Ե. 1. — Անծնրդ ճօղ ... կու ճօճկու տաս, Ս: ու ճօճ կու տայ, ՏՌ: — 2. —

Այդ անատակ ծովի, Ս: ... շարդ արար, ՏՌ: Զ. — Չունի, Ս: Է. 1. — ծաղկեալ, ՏՌ: — 2. — ... ծամերդ ամէն եւ ոսկելար, Ս: Ը. 1. — բերած, ՏՌ: — 2. — բուսեր — բուրեն, Ս: նունուփար, Ռ: Թ. 1. — կապած եւ ապակի, Ս: — 2. — որ, չունի Ս: Ժ. 1. — Արեկ իջցուք ի մեր բաղչայն, Ս: անենք, Տ: — 2. — սիրոյն, Տ: ... զեղ դիւահար, Ս: — Այս տունը չունի Ռ: ԺԱ. — Չունի Ռ: — 2. — Կեռերդ յորդոր ... Տ:

ԺԲ.

Մարդ որ սիրոյ կու հանդիպի, նա բան ըզկրակ լինի ի վառ,
Այլ ոչ աղօթք ի միտ կու գայ, ոչ Յայսամաւոր կարողայ եւ նառ:

ԺԳ.

Շրրթունքըն շող է լուսեղէն, պըռկէն ի վայր թափի ջաւհար,
Ով որ մեղաց հաշակն առնու, այլ Աստուծոյ չի տար խարար:

ԺԴ.

Սէրըն զԱդամ դրախտէն եհան, յերկիր ծրգեց արար շիւար,
Եւ սատանի ըզնա մատնեց, որ չարչարեց ամ վեց հազար:

ԺԵ.

Սէթայ որդիքըն խառնակեց, որ ճրգնաւորք էին յօժար,
Զփողն ու զծնծղակըն լըսեցին, ամէնն եկին լեռնէն ի վայր:

ԺԶ.

Կինն զՈվանէսըն զլխատեց, Հերովդէի պղծոյն համար,
Որ նա վառեալ էր ցանկութեամբ, փութով տարաւ զկամքն ի կատար:

ԺԷ.

Սէրըն հանէ զմարդն ի խելաց, որ այլ իսկի չըկայ խարար,
Իմաստութիւնըն խափանի, եւ հանց դառնայ բան զդիւահար:

ԺԸ.

Կինըն քաղցրիկ զըրոյց ունի, բան զօծ քայլէ ւ առնէ զալար,
Զթոյնըն թափէ յանկարծակի, զմարդ զէտ ականատ բռնէ անճար:

ԺԹ.

Զունքըն ծարրէ, զաչքըն դեղէ, էնց ցեղ լինի բան զԲելիար,
Միշտ ըզպըռուկըն ծամըռտէ, զմարդիկ ծրգէ ի բարն ի վայր:

Ի.

Դու ըստեղծեր կինն ի կողէն, վասն Ադամայ սիրոյն համար,
Թէ անեցէք եւ բազմացէք, եւ շրջեցէք լերին ւ ի բար:

ԻԱ.

Նեռ սոյն սիրովըն բորբոքին, այս հողածին մարդիքըս չար
Որ հանապագ կու պոռնկին, երթան ի կեր որդանցն յօժար:

ԻԲ.

Թուլգուրանցին զրեզ կ'աղաչէ, թէ կնոջ սիրոյն մի տիրանար,
Որ չը զրկիս դու ի լուսոյն, ւ այլ յԱստուծոյ չլինի քեզ նար:

(4)

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿՍՆ

ԺԲ. — Զունի Ռ: — 1. — կու լինի վառ, Տ: — 2. — աղօթքն ի յուշք, Ս:

ԺԳ. 1. — Շրրթունքդ ... պըռնկնէդ ... ճուհար, ՏՌ: — 2. — զմեղացն ճաշակ ... յԱստուծոյ չի տայ, Ս:

ԺԴ. 1. — ... հանեց, ՏՌ: — 2. — եւ զնա մատնեաց սատանայի, որ չարչարեաց ... ՏՌ:

ԺԵ. 1. — Սէթայ որդիքն խառնակեցան ... ՏՌ: — 2. — Զփող և ծնծղեակն ... ամէնքն, Տ:

ԺԶ. 1. — Հերովդիւայ, ՏՌ: — 2. — նա, չունին ՏՌ:

ԺԷ. 2. — հէնց, Ս:

ԺԸ. — Զունի Ռ: — 1. — ... զբուց ունի, խաթաւ ի հետ առնէ, Տ: — 2. — Յանկարծ զթիւնքն ի մարդ թափէ, որպէս զականատ ... Տ:

ԺԹ. — Զունի Ռ: — 1. — Յունքն քաղէ, ... խննէչանայ քան ... Տ: — 2. — ... զպոռնկն ծամուէ, ... կու ձգէ ... Տ:

Ի. — Զունի Ս:

ԻԱ. — Զունի Ս: — 1. — Նեռ, թեբևս պիտի ըլլար՝ Դեռ:

ԻԲ. — Զունի Ռ: — 1. — զձեզ, Ս: — 2. — ... որ զչրկիք յանճառ ... այլ, Տ:

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀՕՄՕՐ

ՍԱՆ ՅՐԱՆՍԻՍԿՈՅԷՆ ԴԷՊԻ ՍԻՏՆԻ

Ֆրճի արևադարձային ջրատառ հա-
րուստ բուսականութեամբ կղզեխումբ մըն է,
Բրիտանական գրոշին տակ: Աւնեցանք
հինգ ժամուան շատ հետաքրքրական պտոյտ
մը: Տեղուոյն բնիկները յաղթանդամ ու վա-
յելակազմ են, մորթեքնին թուխ, մազեր-
նին ոգնիկ մազերուն պէս ցից ու խիտ: շատ
ծոյլ են կ'ըսեն, կը բաւականանան քիչով,
գրեթէ երկրին ու բնութեան պարզեւածով:
Երկիրը տակաւին անմշակ վիճակի մէջ է,
ունի հանքային հարստութիւններ, սակի և
սօսա զորս անգլիացիները կը շահագործեն:
Առետուրը ամբողջ հնդկներու ձեռքն է,
տեղացիները ոտովկան կամ պետական փոքր
պաշտօնեաներ են: Բնիկները որ 9-10 հա-
զար կը հաշուուին, անհետանալու վրայ
են. կ'ամուսնանան հնդկներու հետ ու կը
ձուլուին անոնց մէջ: Միսիոնարական զործ
գրեթէ անկարելի եղած է անոնց մէջ,
վասնզի դժուար է քրիստոնէացնել զիրենք:
կը հաւատան որ աշխարհի բոլոր չար ու
փետակար բաներուն հեղինակը քրիստոն-
եաներուն Աստուածն է. իրենց աստուածը
բարիքներուն աստուածն է: Աւտրալիացի
ճամբորդ տիկին մը, որ շատ յաճախ հոն
գտնուած է, բաւական հետաքրքրական
բաներ պատմեց անոնց կրօնական ու ազ-
գային հաւատալիքներու և սովորութեանց
մասին: Մինչև Անգլիական գրաւումը,
մարդկային գոհեր կ'ընեն եղեր իրենց շա-
տուածներուն: Աւնին իրենց յատուկ ազ-
գային ոգելից ըմպելի մը, պատրաստուած
ֆօֆօրէն, խմելով կը գինոփնան մարդիկ
և կիներ, զգայազիրի կ'ըլլան, առտարոց
պարեր ու արարողութիւններ կը կատարեն.
նոյնիսկ քրիստոնէացած բնիկներ կը մաս-
նակցին այդ սաղուսնական տօներուն: Քա-
ղաքին մէջ տեսանք օճառի և տախտակի
զործարաններ: Քաղաքը բաւական կոկիկ
ու մաքուր է, իսկ քաղաքէն դուրս գետ
ճամբաները լաւ վիճակ մը չունին:

Այստեղ ալ բնիկները Հօնօլուուի նման
նուագիտութեամբ մեզ ընդունեցին և նուա-
գախումբով ճամբու գրին:

Դեկտեմբեր 24ին, Ուրբաթ օրը առ-
տուն հասանք Օքլէնտ, նոր Զէլանտա: Ա-
մերիկեան քաղաքի մը տպագրութիւնը
ունեցայ, 350.000ր մօտ բնակիչ ունի,
երկիրը բաւական մշակուած է, առատ առ-
ջարի և ոչխարի հօտեր ունի, սիրուն քա-
ղաք մը: Կլիման մեղմ, արևադարձային,
հարուստ հանքային ջրերով, շրջապատուած
բնութեան գեղեցիկ տեսարաններով: Ծամ-
բորդներէն մէկը ըսաւ ինծի որ այստեղի
ժողովուրդը շատ կը նմանի Լօնտօնի ժո-
ղովուրդին իր ապրելու կերպերով ու սո-
վորութիւններով: Կան քիչ թուով բնիկներ,
որոնք կ'ապրին քաղաքներէ հեռու: Հա-
րիւր տարուան քաղաք է Օքլէնտը, աշ-
խարհի գեղեցիկ նաւահանգիստներէն մին:
Անգլիացիները բաւական պատերազմած են
բնիկներու հետ, մինչև որ վերջնականապէս
հաստատուած են երկրի մէջ: Ամբողջ նոր
Զէլանտա ունի շուրջ մէկ միլիոն բնակիչ,
որուն մէկ միլիոնը կ'ապրի Օքլէնտի մէջ:
Քաղաքը շատ արագ յառաջ կ'երթայ, և
բնակիչները շատ ուրախ ու երջանիկ են:
Զբօսաշրջիկներու համար տեսարժան վայ-
րեր շատ ունի, անտառախիտ բարձրութիւն-
ներով շրջապատուած է քաղաքը: Եղեմ
լերան 644 ոտք բարձրութիւնէն գիտեցինք
քաղաքը, ուրկէ կը պարզուի լաւագոյն
տեսարանը: Օքլէնտը շքեղ ու լաւ ծրա-
գրով կերտուած քաղաք մըն է. շատ զար-
մանալի է որ այս քաղաքին մէջ չկան հայեր:
ՍԻՏՆԻ. — Դեկտեմբեր 27ի առտուն
ժամը 9ին նաւը խարխիս նետեց Սիանիի
նաւահանգիստը: Ծամբորդներու գիմառ-
ութեան համար եկած մեծ բազմութեամբ
ժողովուրդը, երբ կ'ամուրջը ձգուեցաւ ե-
զերքին, ներս խուժեց և ահա քանի մը
վայրկեան ետքը արդէն շրջապատուած էի
շուրջ երկուսուսնակ մը հայերով. շատե-
րուն աչքերը ուրախութեան արցունքներով
գրիսմակուած էին, ամէն ինչ այնքան ըն-
տանի ձևով, որ կարծես տարիներով իրենց
հետ եղած ըլլալի. բոլորին հետ ծանօթա-
ցանք ձեռքի սեղմումներով և մաքստան
պաշտօնական ձեւակերպութիւններէն ետք,
Եկեղեցական Սորհուրդի անդամները մեքե-
նաներով մեզի տարին հոն՝ ուր որոշուած
էր ինծի համար բնակութեան իրր վայր.
Քաղաքի կեդրոնական մասին մէջ յարկա-
բաժին մը, մասնաւոր պատրաստուած գրեթէ

տարիէ մը ի վեր, Տէր և Տիկ. Բանիկեաններու կողմէ:

Կէսօրուան ճաշերնիս ըրինք Եկեղեցական Խորհուրդի անդամներուն հետ, Պ. Բանիկեանի տունը, որ Խորհուրդի քարտուղարն է ու շատ յարգուած անձնաւորութիւն մը: Մեկտուրնէն, հինգ հարիւր մղոն հեռաւորութենէն, զիմաւորութեան եկած էին մասնաւոր յանձնախումբի անդամներ, զիսաւորութեամբ Պ. Բարսեղեանի որ տեղւոյն վարչութեան քարտուղարն է:

Փամբ 2.30ին որոշուած էր զիմաւորել ժողովուրդը բողոքական եկեղեցիի մը մէջ: Դասցինք. կարճ արարողութենէ մը վերջ, որուն ընթացքին Բարեշնորհ Տրց Մ. Աւագ Սրկ. Յակոբեանը կարդաց Ս. Երուսաղէմի Պատրիարքական Տեղապահ Գեր. Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեանի Կանդակը, հակիրճ ողջունի խօսքս ըրի իրենց: Ապա իջանք եկեղեցւոյ ներքեի սրահը, ուր թէյստեղան պատրաստած էին հայ տիկիներ. բոլորին հետ ծանօթացանք մէկիկ մէկիկ:

Յաջորդ օրուքն սկսեալ, Մենդեան Պատարագի պատրաստութեամբ զբաղեցանք: Երկրորդ օրը իմ այցելութիւնս տուի կարևոր ազգայնի մը, Պր. Արթըր Ակինեանին, Սերաստացի. հոն հաւաքուած էին շուրջ քսան հայեր, իր շքեղ բնակարանի ծաղկազարդ ու աւազանով պարտէզին մէջ: Արևոտ ու գեղեցիկ օր մըն էր, ունեցանք հայկական խոտովածը, բարեկամական ու ազգային տաք մթնոլորտի մը մէջ, փոխադարձ բաժակաճառերով: Պր. Ա. Ակինեան ազնուօրէն խոստացաւ ինձի օգնել իմ գործիս մէջ: Լաւ տպաւորութեամբ բաժնուեցանք այդ տաքուկ միջավայրէն, յոյսերով աւելի:

Նոր Տարւոյ առթիւ Եկեղեցական Խորհուրդը սարքեց պարահանդէս մը՝ ուր զիմաւորեցի շուրջ երկու հարիւր հայեր: Պարահանդէսը աննախընթացօրէն յաջող արգիւնք ունեցաւ: Ծնորհաւորեցի զիրենք և Դաւիթորնիոյ իրենց եղբայրներուն սրտակից շնորհաւորութիւններն ու բարեւները հաղորդեցի և նոյն սիրով իրենք ևս փոխադարձեցին: Ազնուութիւնը շատ մեծ է գաղութին մէջ. եկեղեցի մը ունենալու փափաքը ընդհանուրին միակ ու գերազանց փափաքն է:

Եկեղեցական Խորհուրդ. — Միանիի ափ

մը հայերը, սակէ գրեթէ երկու տարինք առաջ, իբրտու մօտ գալով օր մը, զազափաբը կ'ունենան կազմակերպուելու, եկեղեցի մը ու եկեղեցական մը ունենալու մտածումով, կ'ընտրեն իրենց Եկեղեցական Խորհուրդը, տեղական կառավարութեան մօտ հաստատել կուտան իրենց նորընտիր վարչութիւնը: Կը մշակեն նաև համասօս Կանոնադիր-Սահմանադրութիւն մը: Բողոքական Եկեղեցիի մը հետ ալ պայմանաւորուելով, Կիրակի յետմիջօրէններուն կ'երթան անոնց եկեղեցին աղօթելու և երգելու հայերէն Պատարագի ինչ ինչ մասերը, աշխատելով մէկ կողմէ որ օր մը ունենան իրենց եկեղեցական պաշտօնեան: Եկեղեցական Խորհուրդը կը բաղկանայ հինգ անդամներէ. — Պր. Մ. Յակոբեան, տանապետ, Նոր Զուգայեցի, քահանայի գաւակ և ունի Աւագ Սարկաւագի աստիճան, հաւատարապէս հմուտ հայերէն և անգլիերէն լեզուներու ու եկեղեցական արարողութեանց ու կարգ ու սարքերու. հրատարակած է անգլիերէն լեզուով զբքոյկներ, Հայ Եկեղեցւոյ և արարողութեանց մասին, անգլիախօս երիտասարդներու համար: Ստեփան Բանիկեան, քարտուղար, յոյժ ազգասէր ու եկեղեցասէր հայ մը, որուն նախանձայնոյց ջանքերուն շնորհիւ գրեթէ իրականացած է կազմակերպութիւնը Եկեղեցական Խորհուրդին և եկեղեցականի մը Աւստրալիա գալը: Ինքը երբեմնի բնակիչ Երուսաղէմի, սրտին ամենամօտ Հաստատութիւնն է Արրոց Յակոբեանց վանքը, որուն օգտակար ըլլալու խոր հաւատքով կ'աշխատին ինքը, իր ազնիւ Տիկինը և իր չորս զաւակները — երկու աղջիկ, երկու մանչ: Վահան Հանէսեան, զարձեալ եռանդուն, աշխատող, ազնիւ Եղիպտոհայ մը: Կոյո Էտկար, յայտնի Պարսկահայ ընտանիքի զաւակ, խոստացած էր եկեղեցւոյ շինութեան համար յատկացնել ձրի հող, բայց այդ հողին հեռաւորութեան պատճառաւ, քաղաքի կեդրոնական մասէն և հաղորդակցութեան միջոցներէն, խոստացած է վճարել 350 թղթոսկի կառուցուելիք եկեղեցւոյ հողին ու շինութեան համար: Արմէն Արզար, երիտասարդ Պարսկահայ մը, զանձապահ Խորհուրդի:

Այս բոլորը շատ եռանդուն ու ազգասէր հայորդիներ, որոնք լծուած են եկե-

զեցւոյ համար հոգ մը դռնելու կեդրոնական շրջանի մը մէջ, որ առաջ կեկզեցւոյ ինտելեկտուալ սկսելու համար:

Ամենէն երկուստարգ հայ գաղութն է Աւստրալիոյ հայ գաղութը, զերջին պատե-րազմէն յետոյ հաւաքուած ազգիէն ան-դիէն: Կարեւոր մէկ մասը Հնդկաստանի ու Ճապոնի նախկին հայեր են, որոնք քաղա-քական ու տնտեսական աննպաստ գրու-թիւններու ստեղծումով տակաւ առ տակաւ կը գաղթեն դէպի Աւստրալիա: Այս երկիրը յառաջդիմութեան ճամբուն վրայ է, աւելի ընդարձակ քան Միացեալ Նահանգները, բայց հազիւ թէ Գ միլիոն բնակիչ ունի: Հայերը ամենէն պղտրիկ ու ամենէն նոր գաղութը կը կազմեն: Մեծ թիւով Հրեա-ներ, Յայեր, Իտալացիներ ու Սլաւացի ե կիբանանցի քրիստոնեաներ կան:

Սիւնի ամերիկեան քաղաքները յիշե-ցնող վայր մըն է, մէկ ու կէս միլիոնէ ա-ւելի բնակչութեամբ: Լոս Անճէլըսի նման ընդարձակ է և արագօրէն կը յառաջանայ: Կիլման մեղմ ու արեւադարձային է, բնակ-չութիւնը ամբողջ ճերմակ, Աւստրալիոյ ամենէն մեծ քաղաքը և նաւահանգիստը Նիւ Սաութ Վելլը Նահանգի մէջ: Աճի ճարտարապետական ու վաճառականական մեծ կարելիութիւններ: Ամերիկայի ու Եւ-րոպայի գանազան երկիրներու հետ կապ-ուած է ծովային ու օդային ճամբաներով: Բազմաթիւ ու բազմալիզու այս քաղաքը մեծ ազգայն կը խոստանայ իր աշխարհա-գրական դիրքով ու բնական հարստութիւն-ներով, որ տակաւ առ տակաւ շահագործ-ուելու վրայ են: Արդէն իսկ ամերիկեան զբոսազուրի սկսած է հոսիլ դէպի այս երկիրը, անոր բնական հարստութիւնները շահագործելու համար: Կեանքի մակար-դակը արագօրէն կը բարձրանայ Ամերի-կայի հետեւողութեամբ: Կառավարութիւնը որոշած է այս տարի ընդունիլ Աւստրալիա կէս միլիոն մարդ: Կրնաք երեւակայել թէ որքան պիտի աճին երկիրն տնտեսականն ու բնակչութիւնը յառաջիկայ քանի մը տարի-ներու ընթացքին: Հայերու համար ևս լաւ տուն մըն է ապաստանի, մանաւանդ երբ նկատի առնենք Եւրոպայի ու Մերձաւոր Ա-րեւելքի քաղաքական ու տնտեսական ապ-աստով վիճակը:

Աս այժմ հիւրն եմ Բանիկեան ազնիւ ընտանիքին, որոնք մեծ ու փոքր ամէն կերպ կ'աշխատին հաճելի ու հանգիստ կեանք մը տալ ինծի այս երկրին մէջ. ամբողջ յարկարաժին մը տրամադրած են ինծի, որիչ յարկարաժին մը վերածած ենք ա-


ղծթատան, օտար կեկզեցիները անյարմար ըլլալով մեր կիրակնօրեայ պաշտամունք-ներուն: Առաջին հայկական Պատարազը ունեցանք նոր սարքուած աղօթատան մէջ Յունուար Գին, Մինդեան տօնին առթիւ: Գաղութի հայութեան մեծամասնութիւնը ներկայ էր, հազորդուեցան գրեթէ բոլորը ամէն սեռի ու հասակի: Պատարազը ընթաց-քին շատերը արցունքոտ աչքերով կը հե-տեւէին: Հազորդուողներու մէջ կար մէկը որ 55 տարիներէ ի վեր ոչ Հայ Եկեղեցի տեսած, ոչ ալ հազորդուած էր: պատմա-կան մեր այս Պատարազը շատ սրտառուչ ու ոգևորիչ էր միանգամայն: Պատարազէն անմիջապէս յետոյ սկսանք Տնօրէնէքի, Ե-կեղեցական Մտրնօրի անդամներու ընկե-րակցութեամբ: ութսուն ընտանիքի անուն և հասցէներ ունինք. առնցմէ զատ, շա-տեր ալ կան որ տակաւին անձանօթ կ'ապ-րին ու կամաց կամաց երևան կ'ըլլեն: Կը յուսանք որ մտաւոր ապագային կարելի կ'ըլլայ սկսիլ շինութեան կեկզեցի մը, սրահի մը և երիցատան մը:

Աւստրալիոյ հայ գաղութը մեծնալու ճամբուն վրայ է: Կուզան ամէն կողմէ, Եւրոպայի գանազան երկիրներէն, Սլաւիա-յէն, Լիբանանէն, Կիպրոսէն, Եգիպտոսէն, Հնդկաստանէն, Ճապոնէն ու Չինաստանէն: Գաղութի տնտեսական վիճակը միջակ է. քանի մը տարիէն երբ ամէն մարդ կամաց կամաց տեղաւորուի ու իրեն յատուկ սե-փական գործը ունենայ, աւելի լաւ պիտի ըլլայ: Եկեղեցին միայն պիտի ըլլայ մեկ համախմբող վայրը այս երկրի մէջ: Աւստ-րալիական կառավարական օրէնքով ինչպէս կը հաւատտեն, ի հնուց անոր կիրակի օրերը կեկզեցի երթալը պարտաւորիչ եղած է: Աւստրալիական կուսակցական կազմակեր-պութիւններէ զատ ուրիշ կուսակցութիւն-ներ արգելուած են այս երկրին մէջ: Կիրակի օրերը Սինէմաները զոց են, հանգստի և տօնի օրերը շատ խոստովեամբ կը պահուին, բոլոր գործարաններն ու շուկաները զոց են, ինչպէս նաև պաշտօնական տուները:

Մտադրած եմ քանի մը շարաթէն այ-ցելուի նաև Մելպուրն ուր կան շուրջ 60-70 հայեր, ինչպէս նաև Ատալիա, որոնք ան-համբեր կը սպասեն մեզ, ուր կան նաև մկրտուելիք երիտաներ: Սիւնիէն յետոյ, Մելպուրնն է Աւստրալիոյ երկրորդ մեծ քաղաքը:

Սիսեթի

ԱՍՈՂԻԿ Ծ. ՎՐԴ.



ՅԱԿՈՒ ՕՇԱԿԱՆ

ԵՒ

ՀԱՄԱՊԱՏԿԵՐ

ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Յ. Օժականի ՀԱՄԱՊԱՏԿԵՐ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ շաբթ, տասը սուտար հասարներ, մեր գրականութեան արդի քոչանք, 1850էն մինչեւ Համաշխարհային Բ. Պատերազմի վախճանը, ըման մեկ զար պարագրկող հսկայական եւ կորոզական աշխատանք մըն է որուն նմանը ցարդ չէ իրագործուած մեր մեջ, վասնզի Համաշխարհային սովորական հասկացողութեամբ գրողներու կենսագրումներ չեն:

Մեծանուն ննադասը այս հասարներուն մեջ կ'երեւի ոչ իբրեւ հարթակներու հեղինակը, այլ առաւելաբար շինիչ եւ համազրող գրագէտը, մեր նեմարիտ արժեքներ երեւան բերող ու զանոնք սրելի ընծայող աշխատարար. այսպէս է որ Համաշխարհային իւրաքանչիւր հասար արձանագրութիւնը կ'ըլլայ Արեւմտահայ իմացական նիղիւն, «վկայութիւնը» մեր մատուցական շարժումին եւ աւագներ մեր հոգեկան եւ մատուր արժեքներուն, ներկայացուած կեանքով, հմտութեամբ եւ զեղուն մտածումով ու զեղեցիկ լեզուով մը: Յ. Օժականի ոնը Համաշխարհային

ներուն մեջ գտած է իր վերջին կերպարանքը ինքնատիպ եւ ախարմելի:

Այս սուտար հասարներուն մեջ է որ Յ. Օժական մեր արդի գրականութեան սերունդներուն գասակարգումին տակ մեկտեղած է զգրողներու ընդհանուր նկարագիրները, նոյն ձգտումին եւ իրագործումներուն սպասարկուները այսպէս:—

- Զարթոնի Սերունդ
- Ռումանրիքներ
- Կեսեր Ռումանրիքներ
- Գեպի Իրապատեսներ
- Իրապատեսներ
- Արուեստագէտ Սերունդ
- Գիւլպարներ

Անմիջական կամ յետ պատերազմեան գրականութիւն, ասոնց մեծ ու փոքր ներկայացուցիչներով:

Այս շարքին Ս. Արսոնյա Մըքոց Յակոբեանց Տպարանը ցարդ ի լոյս ընծայած է չորս հասարներ. առաջինը Զարթոնի Գեպի, 1945ին, 370 էջ, հեղինակին սղջուցը:

Երկրորդը, Ռումանրիքներ, Հ. Վ. Ալիբեան, Մ. Պեշիկբաշեան, Պ. Գուրեան, 1953ին, 448 էջ:

Երրորդը, Կեսեր Ռումանրիքներ, Թ. Թերգեան, Յ. Սերեան, Մ. Անեմեան, Ռ. Պերպերեան, 1955ին, 183 էջ:

Հինգերորդը, Իրապատեսներ, Ա. Արզիարեան, Լ. Բաւալեան, Գր. Զօհրապ, Տ. Կամարական, Հրանդ, Ա. Զօպանեան, Սիպիլ, Հրանդ Առասուր, 1952ին, 484 էջ:

Անցեղի է զուցէ մեզ յայտարարել, այստեսանցեղեմ իրողութիւն է որ այն հասարներու սպասումէն կախում պիտի ունենայ յաջողներուն հրատարակութիւնը:

Կեսեր Ռումանրիքներու հասարի հրատարակութիւնը կարելի եղաւ Կիպրոսի Հայ հասարակութեան օժանդակութեամբ, մեծանուն գրագէտին յոբելեանին առիթով գոյացած զուամբով:

Կիպրոսի գաղութը իր սրտին ներբացած տուրքը գիտցաւ բերել արժեւորելու համար մեր մեքի մեծ մեակներէն միայն զործը, յանձն առնելով այս գրքի հրատարակութիւնը, այս նետով օժանդակած ըլլալու համար մեր մեակոյրիին:

ԶԱԻՆ ՎՐԳ.

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Հ Ե Ռ Ա Վ Ի Ը Ն Ե Ր

Երևուսդեմ, 1 Մարտ 1955

Սենեկապետ

Ն. Վ. Հիւսեյն Թազաուրի

Ամման

Նորին Վեհափառութեան նշանախօսու-
րեան բարեբաւտիկ առիթով կը ներկայաց-
նենք մեր Միաբանութեան եւ Հայ համայնքի
ենտրոնաւորութիւնները եւ յաջողութեան ու
եղանկութեան ջերմ մաղթանքներ :

ՍՈՒՐԷՆ ԵՊՍ. ԲԷՄԷՆՆԵՆ

Վասն Պատր. Տեղապահի Ս. Արսուր

~ Արեւիկի, 2 Մարտ 1955

Նորին Գերաւանդութիւն

Սուրեն Եպս. Քեմհանեան

Երևուսդեմ

Ճնորհակալ եմ Ձեր ազնիւ ընտրաւոր-
ութիւններուն եւ մաղթանքներուն համար :

ԱԼ - ՀԻՒՍԷՅՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄՍԵՆՆԵՆ

● Դշ. 2 Մարտ. — Սիկիզի կարգաց Մեծի պա-
նայ: Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ կատարուե-
ցաւ Վերահաղաչի առաջին հանդիսաւոր կարգը:

● Եշ. 3 Մարտ. — Երեկոյեան, Մայր Տաճար-
ին մէջ կատարուեցաւ Մեծ պահոց «Եկեացէք» ի
առաջին ժամերգութիւնը, որու ընթացքին քա-
րոզից հանդիսապետ Գեր. Տ. Սուրեն Եպոս. Բէմ-
նան, ընտրան ունենալով ըլն եմ ճանապարհ
և ճշմարտութիւն և կեանք» (Յովհ. ԺԳ. 6): Գեր.
Քարոզիչը բացատրեց հաւատացեալներուն ա-
զաշխարսութեան կարևորութիւնն ու պահեցողու-
թեան բարեբար ազդեցութիւնը մեր կեանքին
վրայ, մանաւանդ այս օրերուն: Հաստատեց նաև
այն իրողութիւնը թէ լայն կամ հանդստաւէտ
ճամբաները զէպի անզունը կ'առաջնորդեն, մինչ
անուկ ճանապարհը կը տանի մեզ երանութեան
ու փառքի: Եւ այդ ճամբան նոյնինքն Տէր Յիսուս
Քրիստոսն է: Ան ցոյց տուաւ մեզի փրկութեան
ճամբան իբրև ապացոյց անսահման սիրոյ, վասն
զի ընա ոչ կամի զմահ մեղաւորին, այլ զղառ-
նալն նորա ի շար ճանապարհէն և զկեանքն:

● Աւր. 4 Մարտ. — Վաղուան նախատեսա-
կին ի Ս. Թորոս նախազանց Գեր. Տ. Նորայր
Եպոս. Պաղարեան:

● Եր. 5 Մարտ. — Ս. Թէոդորոսի զօրալարին:
Առաւօտեան ժամերգութիւնն ու Ս. Պատարագը
մատուցուեցան ի Ս. Թէոդորոս: Պատարագին էր
Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան:

— Կէսօրէ կտք շարժափառաւով մուտք ի Ս.
Յարութիւն, նախազանութեամբ Գեր. Տ. Սուրեն
Եպոս. Բէմնանանի: Կիրակմտից ժամերգութիւնն
ու նախատեսակը պաշտուեցան Տաճարի մեր վեր-
նամատրան մէջ, նախազանութեամբ Նորին Գե-
րապատուութեան:

● Կիր. 6 Մարտ. — Արսաման: Առաւօտեան
ժամերգութիւնն ու Ս. Պատարագը մատուցուե-
ցան ի Ս. Յարութիւն, Բ. Դողդոթայի մեր վեր-
նամատրան մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Ջաւէն
Վրդ. Չինչինեան: Ս. Պատարագէն կտք կատար-
ուեցաւ երբազարձ մեծահանդէս թափօր Քրիս-
տոսի Ս. Գերեզմանին և սոցա Պատանատեղւոյն
չուրջ, նախազանութեամբ Գեր. Տ. Սուրեն Եպոս.
Բէմնանանի:

● Եշ. 10 Մարտ. — Իրիկուան շեկեացէքին
նախազանց և քարոզից Գեր. Տ. Նորայր Եպոս.
Պաղարեան, ընտրան ունենալով «Տէր, լոյս իմ
և կեանք իմ, ես յումմէ՞ երկեայց» (Սաղմ. ԻԶ. 1),
Սաղմոսերգութիւն յիշած լոյսը սովորական լոյսը
չէր, այլ հոգևոր լոյսը: Երբ մարդ զուրկ է այդ
լոյսէն, չկրնար հոգեկան զեղեցիկ յատկութիւն-
ներ նշմարել այլոց մէջ: Ինչպէս կոյր ըլն ոչինչ
կրնայ տեսնել երևութեան զեղեցիկութիւննե-
րէն: Այդ լոյսը կը ներդաշնակէ մեր կեանքը և
ցոյց կուտայ մեզ փրկութեան ճամբան: Ով որ իր
կենդանութեան սիրէ այդ լոյսը և ունենայ զայն
միշտ, այդ լոյսը մահէն կտք ալ պիտի մնայ իրմէ
անբաժան: Իսկ անուք որ իրենց կենդանութեան
կ'անտեսեն զայն, կը մնան միշտ խաւարի մէջ:

● Եր. 12 Մարտ. — Ս. Կիւրղի երասպիմայ
հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր
Տաճարի Աւանդատան Ս. Կիւրղի սեղանին վրայ:
Պատարագին էր Հոգ. Տ. Վարուժան Վրդ. Գա-
պարահեան: Ապա Մայր Տաճարի գաւթիժը, Գեր.
Տ. Սուրեն Եպոս. Բէմնանանի նախազանութեամբ
կատարուեցաւ հանդիսաւոր հանդիսաւոր պաշտա-
մունք, երանանորհ Տ. Կիւրղի Պատրիարք Հօր
հոգւոյն ի հանգիստ, անոր անուան տունին առթիւ:

● Կիր. 13 Մարտ. — Անառակին: Ս. Պատա-
րագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ: Պա-
տարագին էր Հոգ. Տ. Գէորգ Սրբ. Նազարեան:
Քարոզից Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան,
ընտրան ունենալով օրուան ծաշու Աւետարանէն
«Ձի եղբայր քո այս մեռեալ էր՝ և եկեաց, կո-
րուեսալ էր՝ և գտաւ» (Ղուկ. ԺԵ. 32), շեշտեց
մարդը Աստուծմէ հեռացնող նիւթին կորստա-
րներ հանգամանքը: Անտակ որդին չկրցաւ խելա-
մախի և զարմի գալ, մինչև այն բողոքն երբ զերծ
մնաց նիւթին կաշկանդիչ զօրութիւնէն: Մեծք ալ
յուսահատութեան ատեն կ'որոշենք զարմի գալ:
Սակայն պէտք է միշտ արթնուն ըլլալ ու աղօթել:

● Եշ. 17 Մարտ. — Իրիկուան շեկեացէքի
կարգին քարոզից Հոգ. Տ. Պարգե Վրդ. Վրթա-
նէտեան, ընտրան ունենալով «Ձի օրէնքն ի ձեռն
Մոսլիսի տուան, շնորհք և ճշմարտութիւն ի

Տեան Յիսուսի Քրիստոսի եղեն (Յովհ. Ա. 17),
 Հոգ. Հայրսուրբը ցոյց տուա Օրէնքին անհրա-
 ժեշտութիւնը մարդոց համար և աւելցուց որ
 Օրէնքին առաջ և Օրէնքին վեր, պէտք է կատար-
 ւելութեան ձգտիլ, ունենալով ներքին նախա-
 դասութիւն: Երբ մարդիկ ճշմարտութեան նետ ը-
 լան և ապրին աստուածային շնորհով, այն ատեն
 իրեն Աստուծոյ որդիներ, Անոր թագաւորութեան
 իսկական ժառանգորդները կ'ըլլան, արժանանա-
 լով յաւիտենական կեանքի երանութեան: Հոգ.
 Հայրը բացատրել է սուր ներքին ներքին արժե-
 քը: Ինչեց Յիսուսի պատգամը որ կ'ընէ ձեռքի
 զի զկենսա ունիցին. և առաւել ևս ունիցին:

● Կիր. 20 Մարտ. — Տնտեսի: Փակեալ-խո-
 բանի Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տա-
 ճարին մէջ, Պատարագին էր Հոգ. Տ. Հայկազուն
 Վրդ. Աբրահամեան:

● Ել. 24 Մարտ. — Իրիկուան շեկեցէտի
 կարգին քարոզիչն էր Հոգ. Տ. Հայկազուն Վրդ.
 Աբրահամեան, շինաստութիւն Հօր Յիսուս...
 քնարանով: Հոգ. քարոզիչը ցոյց տուա քարին
 խորհելու, խոսելու և զործելու միջոցներն ու
 առաւելութիւնները:

● Եր. 26 Մարտ. — Վազուան Դատարարաց
 Կերպրի առթիւ, կէսօրէ ետք, Ամեն. Տեղապահ
 Ս. Հօր զխաւարութեամբ կատարուեցաւ շքա-
 շափառումով հանդիսաւոր մատք ի Ս. Յարութիւն,
 Կիրակուտքն ու վազուան նախատեսակը պաշ-
 տուեցան Գրտ իւալի այրին կից՝ Ս. Լուսաւորիչ
 եկեղեցւոյ մէջ, նախազանութեամբ նորին Ամե-
 նապատուութեան:

● Կիր. 27 Մարտ. — Դասաւորի: Առաւոտ-
 եան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Լուսա-
 ւորիչ, Կարն դաղարէ մը ետք, Ամեն. Տեղապահ
 Ս. Հայրը մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատար-
 ագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ և նախա-
 զանեց Ս. Գերեզմանին և Պատանատեղւոյն շուրջ
 կատարուած երբազարձ մեծանդեպ թափօրին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՐ

● Գր. 2 Մարտ. — Կէսօրէ առաջ, Ն. Վեհ.
 Հրահայն Քաղաւորի նշանախօսութեան առթիւ,
 Գեր. Տ. Սուրէն Եպո. Քէմհանեան, Հոգ. Տ. Հայ-
 կազուն Վրդ. Աբրահամեան և Տիար Կ. Հինդլեանի
 շնորհաւորութեան զայցին Վեհմ. Մութասարըֆին:

● Կիր. 6 Մարտ. — Երեկոյեան, Ամեն. Տե-
 ղապահ Ս. Հայրը, որ 16 փետր. ին Եղիպտոս մեկ-
 նած էր, վերադարձաւ Ս. Աթոռ, Գեր. Սրբազանը
 Ս. Երուսաղէմի Տնօրինական Աբրամայրերէն տա-
 րա մեր սիրելի ժողովուրդին հոգևոր միտթա-
 րութիւն. քարոզեց այնտեղ. Մեծ Պահքի խոր-
 հուրդին շուրջ, իր խօսքին սովորական շնորհու-
 թեամբ:

● Բշ. 7 Մարտ. — Առաւօտուն, Ամեն. Տե-
 ղապահ Ս. Հօր այցելեց տեղւոյն Օսմանեան

զրամատան նոր Տնօրէն Mr. G. S. Pictou.

● Ել. 10 Մարտ. — Երեկոյեան, Ամեն. Տե-
 ղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ.
 Հայրիկ Վրդ. Աւլանեանի և Տիար Կ. Հինդլեանի,
 ներկայ գտնուեցաւ Թրքական Հիւպատոսարանի
 մէջ տրուած Cocktail partyին:

● Բշ. 14 Մարտ. — Առաւօտուն, Ամեն. Տե-
 ղապահ Ս. Հօր այցելեց քաղաքի Սէուտական
 Արարիոյ նորընտիր Հիւպատոսը:

● Գր. 15 Մարտ. — Առաւօտուն, Ֆրանսայի
 Կրթական Նախարարութեան Abbé Jules Leroy
 այցելեց Պատրիարքարան և ընդունուեցաւ Գեր.
 Տ. Սուրէն Եպո. Քէմհանեանի կողմէ: Յաջորդ
 օրերուն այցելեց Ս. Աթոռոյ Ճեպարատունը,
 ուսումնասիրելով հայկական մանրակարները:

● Գր. 16 Մարտ. — Առաւօտուն, Ս. Տեղեաց
 նորընտիր Գայմազալ Տիար Իպրահիմ Թաքթազ
 այցելեց Պատրիարքարան, իրեն կ'ընկերանար
 Ս. Տեղեաց Ստիկանապետ Սատըզ Էփ. Կալիֆ:

● Ել. 17 Մարտ. — Երեկոյեան, Ն. Ս. Հոս-
 մայ Պրոս ԺԲ. Պապին գահակալութեան 16րդ տա-
 րեկարձին առթիւ, տեղւոյն Պապական Նախար-
 կին կողմէ սարքուած ընդունուեցան ներկայ
 գտնուեցաւ Գեր. Տ. Սուրէն Եպո. Քէմհանեան,
 ընկերակցութեամբ Տիար Կարպիտ Հինդլեանի:

— Կոյն ատեն, տեղւոյն Y. M. C. A. ի սա-
 հին մէջ, Փարիզեան զաշնականար Gilles Guilbert
 կողմէ, Ֆրանսական Հիւպատոսարանի հոլանա-
 ւորութեան ներքեւ սարքուած զաշնակի նուս-
 զահանդէսին ներկայ եղաւ Բար. Յովսէփ Սարկ
 Մամուր:

● Ուր. 18 Մարտ. — Առաւօտուն, Պաղես-
 տինի Խնամատար Կառավարութեան նախկին Ա.
 լազ Քարտուղար Sir Harry Luke այցելեց Մայր
 Տաճար և Պատրիարքարան, ուր ընդունուեցաւ
 Գեր. Տ. Սուրէն Եպո. Քէմհանեանի կողմէ:

● Եր. 19 Մարտ. — Առաւօտուն, Ամեն. Տե-
 ղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ.
 Հայրիկ Վրդ. Աւլանեանի և Տիար Կ. Հինդլեանի,
 փոխ-այցելութիւն տուա Սէուտական Արարիոյ
 նորընտիր Հիւպատոսին և Ս. Տեղեաց նորընտիր
 Գայմազալին:

— Կէսօրէ ետք, տեղւոյն Centre Culturelի
 կողմէ, St. Anneի սրահին մէջ, Ֆրանսական զեռ-
 պան R. P. Tournay O. P. ի նախագահութեան
 ներքեւ տրուած Ֆրանսերէն Սաղմունքու մեկ-
 նութեան և վերձանումի զաստիասութեան ներ-
 կայ գտնուեցաւ Բար. Յովսէփ Սրկ. Մամուր:

● Ել. 24 Մարտ. — Կէսօրէ ետք, Ամեն. Տե-
 ղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ.
 Հայրիկ Վրդ. Աւլանեանի և Տիար Կ. Հինդլեանի,
 ներկայ գտնուեցաւ American Colonyի մէջ, Order
 of St. Johnի կողմէ, ի պատիւ իրենց նախագահ
 Sir Stewart և Lady Duke-Elderի տրուած թէյն-
 սեղանին:

صدرها - بطريكية الارمن الارثوذكس
 المدير والمحرر المسؤول - الآب هاياكوزن أبراهيان
 تطبع في مطبعة دير الارمن - القدس العدد 3

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
 Editor - Father Haigazoun Abrahamian. Armenian Convent, Jerusalem.
 Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.



«ԱՌՆ»-ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԿԻՎՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԿԱՐԱՆԸ
ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱԾ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ: Վեր. Տիգրան Անդրեասեան: Նուէր Քրիստ. Ջանիցէն: Պէյրութ, 1954:
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԼԱԶԱՐԵԱՆ ՏՈՀՄԻ ԵՒ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՅ:
Յովսէփ Թաղէսեան (նուիրատու): Վիեննա, 1953:

AN OUTLINE OF AMERICAN LITERATURE (In Arabic). Presented by U. S. A. News
ONLY THE VALIANT. Charles Marquis Warren. Presented by Carmen Kludjian. [Review.
Ն. Եոթրի 2. Բ. Ը. Մ.ի Կեղր. Վարդ. Ժողովը կը նուիրէ 98 կտոր ձայնագրուած երգեր:
ԵՐԳԱՐԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԶԱՅՆԱՊԵԱԿՆԵՐՈՒ ԵՒ Բ. Տպ.: Վանլիան եղբարք (նուիրատու):
ԲԱՆԱՍՏԵՂԵՄԿԱՆ ԵՒ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԳՈՀԱՐՆԵՐ: Ն. Նշտունի (նուիրատու):

- 9. Կէորգեան կը նուիրէ իր երեք զերբերը. —
ա) ՍՏՈՐԱԿԱՅՈՒԹԵԱՆ ԶԳԱՑՈՒՄԸ ՏՂՈՑ ՄԷՋ:
բ) FROEBEL DEVANT LA PEDAGOGIE SCIENTIFIQUE.
գ) DE L'EFFICACITE DE L'EXEMPLE.

PETITE HISTOIRE DE L'ARMENIE ET DE SES HOMMES CELEBRES. A. Atanassian
ԱՆՏԷՐԻՆ ՏԷՐԸ (Տրամ 4 Արար) Յարութ. Վրդ. Մուշեան (նուիրատու): [don de lui.
ՅՈՒՇԱՐԶԱՆ: Յարութիւն Վրդ. Մուշեան (նուիրատու):
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ - Միջին դարնից: Ա. Ե. Տարի: 2. Ամիրեան (նւրտ.):
Աւետիս Գ. Մեսուսեան կը նուիրէ իր երաժշտական կտորներէն. —

- ա) ՀԱՐՄԵՍ ՊԵԱԿՏՆԵՐ - Փոքրիկ երգարան:
բ) ԵՐԵՔ ՄԵՆԵՐԳ - Դաշնակի ընկերակցութեամբ:
գ) ՆԱՐՕՏ - Դաշնակի ընկերակցութեամբ:

ՀԱՅՐԵՆԻ ՄՐՄՈՒՆՋՆԵՐ: Լեւոն Բզնունի (նուիրատու):
ՆԱՅԻՐԵԱՆ ԵՐԳԵՐ: Համբարձում Պէրպէրեան (նուիրատու):

EXPERIENCES SUR L'HEMOSTASES BIOLOGIQUES EN NEUROCHIRURGIE ET IN-
VESTIGATION DU PROBLEME D'ANTIGENICITE DE LA THROMBINE. Don de
ՄԵՆՏՈՐ ԵՐԿՍԵՌ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԳԻՆ: Յ. Ս. Նաշալեան (նւրտ.): [Dr. S. Gueukdjian.
ԱՆՀԱՅՐԵՆԻՔ ՅԵՂԻՆ ԵՐԳԸ: Արմենակի (նուիրատու):

ԱՅՍՊԷՍ ՍՊԱՆՆԵՑԻՆՔ: Արամ Երկանեանի յուշերէն: Նուէր Եղուարդ Պողոսեանէ:
ՀԱՅԸ ԵՒ ԻՐ ՔԻԹԸ - Երգիծական երկերի ժողովածու: Վիհակ Խորխոսեանի (նւրտ.):
ՀԱՅԵՐԷՆ ԶԱՅՆԱՊԵԱԿՆԵՐՈՒ ԵՐԳԱՐԱՆ: Գ. Տպ.: Հրատ. Եւ Նուէր ձանօ վաճառատան:
ՄԱՆԿԱԿԱՆ ԹԻԻԵՐ - մանկապարտէզի կարգերու համար: Օննիկ Թոփուզեան (նւրտ.):

HISTORY OF THE ARMENIAN CULTURE AND LITERATURE (In Arabic). Doct. K. L.
Astartjian (presented by him).


DIE GRUNDLAGEN DES ARMENISCHEN KIRCHENRECHTS. Dr. A. Nazarian (donor).
ՏԱՆԸՀԻՆԿՍՄԵԱԿ ԿԻՐԱԿ. ԴՊՐՈՑԻ ՍԲ. ՄԵՍՐՈՊ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ - Բէյսին,
Ուխտեանին: Թորոս Մատաղեան (նուիրատու):

ՃԱՌ ՊԱՐՏԻԱՅԻ 19րդ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ: Նուէր Տիկին Վ. Մինասեանէ:
ԲԱՆԱՍՏԵՂԵՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Անտանաս Վենցլովա: Նուէր ըստ նախորդին:

THE BAKHTIARIS. Vartan Melkonian (presented by him).
ԵՐՈՒ ԱՄԻՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ: Յովհաննէս Պողոսեան (նուիրատու):
ԱՄԲՈՒՆԵՐԸ ԽԵԼԱԳՐՈՒՄԵՆ ԵՆ (Պոէմ): Եղիշէ Չարենց: Նուէր Գ. Աղաբեանէ:
ԱՂՕՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Բիզանդ Եղիայեան: Հրատ. Եւ Նուէր Հայց. Եկղ. Կիրակ.
ՀՈՎԻ ԱԶՈՆ: Կ. Սիտալ: Նուէր «Արարբ»էն: [Դպրոցներէն:

ՊԱՅԲԱՐ - Օրաթերթ: 1933 Եւ 1935 տարիներու հաւաքածոները, կազմուած: Նուէր
Ռուբէն Իկիտպաշեանէ:
Ամերիկայէն Իկ. Միշկիւնազ Յովսեփեան կը նուիրէ 14 Անգլիերէն զերբեր:
ԱՐԶԱԿ ԷՋԵՐ, ՆԱՄԱԿՆԵՐ, ՔԵՐԹՈՒԱՆՆԵՐ: Եղիա Տէմիրճիպաշեան: Հրատ. Եւ Նուէր
Հայ Կրագէտներու Բարեկամներէն:

(Շարունակելի)



Ժ Ա Մ Ա Գ Ի Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ
 ԱՐԱՐԵԱԼ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՋԱՅՆ ՄԵՐՈՑ
ՍԱՀԱԿԱՅ ԵՒ ՄԵՍՐՈՊԱՅ
 ԵՒ ԵՐԱՆԵԼԻ ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ ՄԵՐՈՑ
 ԳԻԻՏՈՅ ԵՒ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԱՆԳԱԿՈՒՆԻՈՅ
 ԵՒ ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅՆ



Ե. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ Ո Տ Ս Տ Ե Ս Ա Ն

Ս. ԱԹՈՒՌՈՅՍ ՏՊԱՐԱՆԷՆ
 Յ. ՕՇԱԿԱՆ
ՀԱՄԱՊԱՏԿԵՐ ԱՐԵԻՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
 ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՐ
 ԿՐՏՍԵՐ ԹՈՄԱՆԹԻՐԵՆԵՐ

Թ. ԹԵՐԶԵԱՆ — Յ. ՍԵԹԵԱՆ — Մ. ԱՃԵՄԵԱՆ — Ռ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Էջ՝ 186

Գիճ՝ 10 ՇԻԻԳ

Յ. ԳՕՇ

ԿՐԱԿԷ ՇԱՊԻԿԻ ՄԷՋ

(Պատմաագիտ.)

Էջ՝ 156

Գիճ՝ 7 ՇԻԻԳ